ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1945 *Общественные науки*

Ռ. Ս. Պիոտրովսկի
ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ[1]

Սովորաբար ընդունում են, որ Առաջավոր Ասիայի պատմության մեջ հայերը երևան են գալիս մ. թ. ա. VI դարի սկզբին։ Պարսից Դարեհ թագավորի՝ Բիսուքունի հայկական հուշարձանի և Նախշի-Ռուստեմի ժայռի դամբարանի վրայի արձանագրություններն առաջին անգամ հիշատակում են Արմինա երկիրը և արմինների ժողովրդին։

Վաղուց արդեն նշված է, որ այդ հուշարձանների երեքլեզվյան սեպագիր տեքստերում հին-պարսկական Արմինա տերմինին բաբելոնյան տեքստում համապատասխանում է Ուրարտու տերմինը, այսինքն՝ այն տերմինը, որով բաբելացիները սովորաբար անվանում էին Ուրարտու երկիրը—Վանի թագավորությունը։

Դրանից վաղուց արդեն այն եզրակացությունն էր հանվում, որ մ. թ. ա. VI դարի սկզբին, Ուրարտուի կործանումից հետո, հին թագավորության տերիտորիան գրավել է մի եկվոր ժողովուրդ—արմինները (ըստ Հերոդոտի՝ արմենները), որով և բացատրվում է Արմինա և Ուրարտու տերմինների հոմանիշ լինելը Դարեհի երեքլեզվյան տեքստերում։

Մինչև վերջին օրը պատմական գրականության մեջ. Առաջավոր Ասիայի և Կովկասի ժողովուրդների պատմությանը նվիրված աշխատություններում, հայերի ծագման ամենաընդունելի թեորիան այն թեորիան է համարվում, որի համաձայն արմենները, Փոքր Ասիայի արևմտյան մարզերից շարժվելով, գրավել են Հայկական բարձրավանդակը և, ձուլվելով հին ուրարտացիների հետ, կազմել են մի նոր ժողովուրդ—հայեր։

Այսպիսով, ըստ այդ կառուցվածքի, հայ ժողովրդի մեջ տեղի է ունեցել երկու տարրերի—եկվոր, հնդեվրոպական տարրի և տեղական, արտաքինական կամ հարեթական տարրերի միաձուլում։

Ենթադրում են, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ մեծ նշանակություն է ունեցել նաև կիմմեր-սկյութական ներխուժումը Առաջավոր Ասիա, որ կատարվել է հին պետությունների մայրամուտից առաջ։

Սակայն այդ բոլոր տեսակետներն արտահայտվել են հարևանցիորեն, հիպոթետիկ ձևով, ընդհանուր սխեմատիկ գծերով։

Մենք չունենք ոչ մի գիտական աշխատություն, որի մեջ հայերի ծագման հարցը քննության առնվեր խորացված կերպով։ Իրերի այսպիսի դրությունը շատ պարզ ձևով է բացատրվում—նրանով, որ այս չափազանց կարևոր հարցը լուծելու համար չափազանց առնչան նյութ կա։

[1] *Զեկուցված է ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի գիտական սեսիայում 1944 թ. նոյեմբերի 1-ին։*

Կարելի է պնդել, որ հայերի ծագման հարցով գիտնականներն զբաղվել են հարկադրական կարգով և լոկ այն պատճառով, որ ամեն մի ժողովրդի պատմությունն ընդունված է գրել բուն սկզբնավորումից։ Մի քանի աշխատություններում հեղինակները փորձել են նոր ժողովրդի համար անմիջական նախնիներ գտնել Առաջավոր Ասիայի հնագույն պետությունների մեջ։ Իսկ մի քանի այլ հետազոտողներ դիմել են միգրացիոն թեորիային և, իրոք, գժվարին կացության մեջ ընկնելիս ամենից ավելի հեշտ է ժողովրդի պատմությունն սկսել նրա գալուց։ Ժողովրդի պատմության սկիզբը դարձնելով նրա գալը դրսից, միգրացիան, կարելի է հրաժարվել այն հարցի քննարկումից, թե որտեղից են եկել նախնիները, և սահմանափակվել լոկ լեգենդներ բերելով։

Այդպես է ստացվել նաև հայերի հնագույն պատմության նկատմամբ։ Որոշ պատմաբաններ անվերապահորեն ընդունել են անտիկ գրողների՝ Հերոդոտի և Սարաբոնի տեղեկությունները հայերի փոյուգիական և թեսալիական ծագման մասին, ուստի էլ սահմանափակվել են հայերի նախահայրերի մասին Մովսես Խորենացու Պատմությունից լեգենդներ բերելով առանց որևէ մեկնաբանության, կամ աննշան դիտողություններով, իսկ առավել սկեպտիկորեն տրամադրված գիտնականները ժխտել են թե Հերոդոտի տեղեկությունները և թե Խորենացու պատմածները, դրանք բոլորն էլ համարելով որևէ հիմքից զուրկ բացարձակ հերյուրանքներ։

Սովորաբար հայերի ծագման հարցը քննելիս գլխավոր ուշադրությունը դարձվում է այն փորձերին, որոնց նպատակն է եղել պարզել այս ժողովրդի նախնական բնակավայրը և այն ուղիները, որոնցով հայերը եկել են Արևելք։ Այս դեպքում շարժման ուղիները հաճախ որոշվում են Առաջավոր Ասիայի հասարակության ավելի ուշ շրջանի ուղիների անալոգիայով, և որպես հնագույն գաղթի օրինակ վերցնում են էթնիկական այն շարժումները, որոնք ժամանակի տեսակետից հեռու են քննարկվող շարժումներից, առանց հաշվի առնելու հին աշխարհի և միջնադարի երևույթների որակական տարբերությունն ու էությունը։

Սովորաբար հայերի ծագման հարցը քննելիս այդ հետազոտությունների հիմնական մեթոդը այնպիսի տերմինների որոնումներն են, որոնք համահնչունությամբ հիշեցնում են հայերի անունը։ Սակայն տերմինաբանական այդ մերձեցումները ինքնին չափազանց քիչ բան են տալիս։ Այսպես, օրինակ, ինչ կարող են տալ մեզ հետաքրքրող հարցի համար Հոմերոսի Իլիականում հիշատակվող արիմների ժողովրդի մերձեցումները արմենների հետ։ Նախ, պետք է պարզել այդ մերձեցումների օրինականությունը, լոկ, երկրորդ, պետք է թեկուզ ժամանակագրորեն պարզել՝ որտեղ են ապրել լոկ իրենց անունով մեզ հայտնի այդ ժողովուրդները և ինչ են ներկայացրել իրենցից։ Մինչդեռ Առաջավոր Ասիայի և Կովկասի ժողովուրդների ծագման հարցին նվիրված աշխատությունների հակայական մեծամասնությունն այդպիսի չհիմնավորված կուգադրություններ է պարունակում։

Հասկանալի է, որ մենք չպետք է և չենք կարող բոլորովին ժխտել տերմինաբանական մերձեցումները, սակայն հետազոտական աշխատության մեջ ևս նրանք օրինական բնույթ են ստանում լոկ այն դեպքում, երբ հիմնավորվում ու հաստատվում են այլ նյութերի միջոցով։

Մեծ սխալ կլիներ ենթադրել, թե հայ ժողովրդի ծագման հարցին ժառանգաբար բոլոր փորձերն էլ ապարդյուն են անցել։

Բավական շատ հետաքրքրական փաստեր են հավաքված, մի քանի դրույթներ կարելի է արդեն հաստատված համարել, բայց և այնպես ամբողջ հարցը դեռ մնում է մութ, չլուծված։ Այստեղ բանը նյութի աղքատությունը չէ, այլ հարցին ժառանգաբար, որոնումների ուղղությունը, որոնք, հիմնված լինելով հնդեվրոպական թեորիայի վրա, ստատպել են ֆորմալիզմով և մոդերնիզացիայով ու համարյա միշտ կարված են եղել հայերի ասպարեզ գալու ժամանակի ամբողջ պատմական իրադրության ուսումնասիրումից։

Ընդունելով այն փաստը, որ հայերը մ. թ. ա. VI դարի սկզբին ոչ միայն գրավել էին Վանի թագավորության տերիտորիան, այլև ուրարտացիների տեղը Առաջավոր Ասիայի մյուս երկրների ու ժողովուրդների շարքում, հետազոտողները համառորեն անտեսել են ուրարտական նյութը։ Մինչդեռ աշխատանքի այս ուղղությունը կարող է որոշ արդյունքներ խոստանալ։

Եվ, իրոք, ինչպես կարող ենք հայերի ծագման հարցը հետազոտելիս հրաժարվել այն իրադրությունն ուսումնասիրելուց, երբ բարձրացել է արժենների գլխավորած ցեղային միությունը, այսինքն՝ երբ կործանվել են հին Արևելքի—Ասորեստանի և Ուրարտուի հզորագույն պետությունները, և ասպարեզ են եկել նրանց փոխարինող նոր ուժերը։

Կամ ինչպես կարող ենք հայերի ծագման հարցն անջատել Վանի թագավորության պատմությունից, եթե հայերը ոչ միայն գրավում էին այդ թագավորության տերիտորիան, այլ նաև յուրացրել էին ուրարտական կուլտուրան։ Այդպիսի աշխատանքից հրաժարվելը հավասարազոր է բուսաբանի՝ բույսերի արժատներն ուսումնասիրելուց հրաժարվելուն։

Ասենից առաջ պետք է կանգ առնել երկու հարցի վրա, որոնք դրված են հայ ժողովրդի ծագման վերաբերյալ իմ այս աշխատանքի հիմքում։ Դրանք ուրարտական պետության ծագման ու զարգացման և Առաջավոր Ասիայի հին-արևելյան տիպի պետության կործանման պատճառի հարցերն են։ Բերում եմ այս ուղղությամբ իմ աշխատություններից բխող միայն հիմնական հետևությունները։

Արդեն նշվեց, որ հայկական պետության ծագման հարցը շատ ընդհանուր գծեր ունի Վանի թագավորության ծագման հարցի հետ, իսկ Հայաստանի տերիտորիան Արտաշիսյանների և Արշակունիների ժամանակներում մոտավորապես համընկնում էր Ուրարտուի տերիտորիայի հետ։

Մ. թ. ա. XIII—IX դ. դ. ասորական պատմական փաստաթղթերի հիման վրա կարելի է հետևել Ուրարտուի պետության կազմավորման աստիճանական պրոցեսին Հայկական բարձրավանդակում։[1]

Սկզբում հիշատակվում են «Ուրուատրի երկրներ», այսինքն Ասորեստանից պաշտպանվելու համար միավորված ցեղերի միությունը, որի գլուխ էր կանգնած Ուրուատրի (Ուրարտու) երկիրը։

Ավելի ուշ Ուրուատրին իր դիրքը զիջում է Նաիրի երկրին, որը գլխավորում էր Հայկական բարձրավանդակի ամբողջ արևմտյան և կենտրոնական մասի ցեղերի միությունը, որի մեջ մտավ. հավանորեն, նաև ինքը՝ Ուրուատրին։ Նաիրի միության չափերի մասին դատել կարելի է թեկուզ

[1] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 39—50։

Թլգլաթպալասար I-ի տեքստի հիման վրա, որը պատմում է, թե ասորեստանցիների դեմ դուրս եկան Նաիրի երկրի 83 թագավորներ։

Մ. թ. ա. IX դարում Ուրարտուն կրկին բարձրանում է շատ շուտով, ցեղերի միության փոխարեն գլխավորում է պետությունը, ըստ որում Նաիրի երկիրը մտնում է նոր պետության կազմի մեջ։ Դեռ մ. թ. ա. IX դարի վերջերին ասորեստանցիները շարունակում էին ըստ հին հիշողությունների Ուրարտուն անվանել Նաիրի. ուրարտական առաջին թագավորները ևս ավելի ուշ շրջանի «Տիայնայի թագավոր» սովորական տիտղոսի փոխարեն իրենց անվանում էին «Նաիրի երկրի թագավորներ»։

Այսպիսով, ասորական աղբյուրները, որոնք վճռական նշանակություն ունեն Ուրարտուի պետության ծագման հարցում, ապացուցում են ուրարտացիների՝ Փոքր Ասիայի արևմտյան մարզերից Հայկական բարձրավանդակի ներիտորիան գաղթելու թեորիայի կատարյալ անանկությունը, այն թեորիայի, որը տեղ է գտել Հին Արևելքի պատմության վերաբերյալ ընդհանուր աշխատություններում, որի անալոգիայով կառուցվել են հայերի գաղթումները Փոյուգիայից։

Առաջավոր Ասիայի մ. թ. ա II հազարամյակի պատմությանը նվիրված վերջին աշխատությունները, վճռականապես հերքելով ուրարտացիների արևմտյան ծագման այդ հնացած թեորիան, որը կառուցվել է առանց հաշվի առնելու Հայկական բարձրավանդակի նախքան մ. թ. IX դարի պատմությանը վերաբերող նյութերը, ուրարտացիներին կապում են հնթիթական աղբյուրների հիշատակած խուրիների և ասորական աղբյուրների՝ սուբարների հետ։

Չնայած որոշ, երբեմն էական տարակարծություններին, Առաջավոր Ասիայի պատմության և լինգվիստիկայի վերաբերյալ բոլոր վերջին աշխատություններն ընդունում են այն ընդհանուր դրույթը, որ Առաջավոր Ասիայի հիմնական հին պետությունները, Ասորեստանը և Ուրարտուն, ծագել են Առաջավոր Ասիական սուբստրատի վրա։

Իր կազմակերպումից հետո շուտով արդեն Վանի թագավորությունը մեծ տերիտորիա էր գրավում՝ իրեն ենթարկելով և իր կազմի մեջ ունենալով Հայկական բարձրավանդակի մի գլխի մասի առանձին երկրները։ Ուրարտուի այդ չափազանց արագ աճումը նրանով է բացատրվում, որ Ուրարտուի պետությունն աճել է ցեղերի խոշոր միության հիմքի վրա, և նրա նախկին դաշնակիցներն արագորեն և առանց էական դիմադրության ընկել են ուրարտական պետության իշխանության տակ։

IX դարի վերջերին Վանի թագավորությունը գրավում էր համարյա ամբողջ Հայկական բարձրավանդակը, իսկ VIII դարի կեսերին, Ասորեստանի դեմ մղած հաջող պայքարից հետո, հասավ իր հզորության ամենաբարձր աստիճանին, գլխավորող դիրք գրավելով Առաջավոր Ասիայի պետությունների շարքում։

Սակայն այդ մեծ պետությունը կայուն և միատարր չէր։ Վանի թագավորությունը, ինչպես և Հին Արևելքի բոլոր պետությունները, ներկայացնում էր իրենց կուլտուրայով տարբեր և զենքի ուժով հպատակված մանր երկրների մի միություն։ Ոչ ուրարտացիները, ոչ էլ ասորեստանցիները իրենց պետություններում չէին ներկայանում բնակչության մեծա-

մանությունը և նրանց սեփական կուլտուրան ու լեզուն միայն պաշտոնական պետական բնույթ էին կրում։

Այդ քաղավորություններն աճում էին ցեղերի ավելի շուտ քաղաքական, քան տնտեսական նշանակություն ունեցող միությունների հողի վրա։ Պետության ընդարձակումը և նրա կենտրոնական մարզերի հաստատումը տեղի էր ունենում առանձին երկրների նվաճման միջոցով, որոնց վրա ռազմական և շինարարական պարհակներ էին դրվում և որոնք պետք է սահմանված ուրքը վճարեին։ Եթե մենք նայենք Վանի քաղավորության քարտեզին, ապա մեզ կզարմացնի նրա խայտաբղետությունը. ամբողջ քաղավորությունը կազմված է մանր երկրներից, որոնք միավորվում էին Վանա լճի շրջանում ընկած Ուիայնտ երկրի իշխանության տակ. երբեմն ծայրերկրները քաղավորության կազմի մեջ էին մտնում խիստ պայմանականորեն, որի պատճառով էլ հնարավոր չէ հաստատապես պարզել ուրարտական պետության սահմանները։ Ուրարտուին միացած երկրներում երբեմն պահպանվում էր նախկին տեղական կառավարողը, բայց նրա հետ միասին նշանակվում էր նաև ուրարտական կուսակալ։

Տեղական կառավարման և քաղավորությունը առանձին շրջանների կուսակալությունների վրա բաժանելու սիստեմը Ուրարտուում մեծ հետևողականությամբ էր կիրառվում, բայց և այնպես, չնայած կառավարչության կազմակերպման այդպիսի սիստեմին, Վանի քաղավորության ծայրամասերը երբեք վստահելի չէին։ Ծայրամասերում շարունակ բռնկվում էին առանձին ցեղերի ապստամբություններ, իսկ երբեմն այդ ցեղերը միանում էին Ուրարուի դեմ։ Պետության այդպիսի անկայունության մասին են վկայում ուրարտացիների մի քանի արշավանքները դեպի այն շրջանները, որոնք ավելի տաջ արդեն միացված էին Վանի քաղավորությանը։ Այսպես, Արգիշտիի տարեգրությունը պատմում է, որ արշավանքներ են կատարվել դեպի այն երկրները, որոնց արդեն նվաճել էր Մենուան, իսկ Սարդուրի տարեգրությունը ցույց է տալիս, որ նա ստիպված էր նորից ամրապնդել Արգիշտիի նվաճումները և բազմիցս արշավանքներ կազմակերպել դեպի այն երկրները, որոնք արդեն միացված էին Ուրարտուին։

Վանի քաղավորության կազմի մեջ էին մտնում այնպիսի երկրներ, որոնք ունեին իրենց կառավարողների ամբողջ դինաստիաներ, և նրանց շատերի անունները պահպանվել են հայկական միջնադարյան տոպոնիմիկայում, հատկապես այն մարզերի անուններում, որոնք չափազանց կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի քաղաքական կյանքում հայկական պետության կազմավորման սկզբին։[1]

Գալու գյուղի մոտ գտնված արձանագրության մեջ, որը պատմում է Մելիտա կատարված արշավանքի մասին, հիշատակվում է Ցուպանի (Ծուպա) երկիրը, որը մեծ նշանակություն է ունեցել Հայաստանի պատմության վաղ շրջանում, և որը անտիկ գրողների կողմից անվանված է Առֆենա, իսկ հայերի կողմից՝ Ծոփք։ Նմանապես և Տավրոս լեռների արևմտյան ճյուղավորությունները բռնող երկրի ասորական անունը՝ Ենզիտե, հունական Անզիտենայի միջոցով փոխարկվել է հայկական միջնադարյան Անձիտ գավառի անվան։ Այդի երկրի ասորական և ուրարտական անունը, որ հավանա-

[1] Г. А. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940.

ասխանում է հունական Արգանենային, ապրել ե հասել է հայերեն Ագենիք տոպոնիմիկ տերմինին, այն ժարդի անվանը, որի նշանակությունը Հայաստանի պատմության մեջ հանրահայտ է։

Վանի թագավորության հյուսիս-արևմտյան կողմում, Ալթի գետի ավազանում գտնվում էր այն երկրի կենտրոնը, որն ասորեստանցիներն անվանում էին Դայաենի, իսկ ուրարտացիները՝ Դիաուեխի. այդ երկրի անունը պահպանվել է Տաոխի ժողովրդի հունարեն անվան, հայկական Տայք ժարդի անվան և վրացական Տաո անվան ձևով։[1]

Վաղուց և բազմիցս նկատված այդ զուգադրությունները կարող են լրացվել ևս մեկ չնկատված համեմատությամբ, որը ցույց է տալիս «Արմենիա» անվան հիմքը կազմող տերմինի խորը հնությունը։

Վանում հայտաբերված է մի մեծ կոթողի (ստելա) բեկոր, որը հավանորեն Վանի ժայռի հյուսիսային լանջին փորված արևելյան որմնախորշի երբեմնի արձանասյան բեկորն է, որովհետև թե քարի հատկությամբ և թե սեպաձև նշաններով չափազանց նման է Սարդուրի այն արձանասյանը, որ Հ. Ա. Օրբելին 1916 թ. պեղումների ժամանակ գտել է արևմտյան որմնախորշում։

Բեկորի վրա պահպանվել է հետևյալ բովանդակությամբ մի տեքստ. «Եալդ աստվածը արշավանքի դուրս եկավ, մեծ ոգորմածությամբ նա նվաճեց Մուրինիին, Ուելիկուխի երկրի թագավորին, նա նվաճեց Յինալիբիին, Լուեխուի որդուն, Տուլիխու քաղաքի և երկրի թագավորին, նա նվաճեց Աշուրնիրարիին, Ադադնիրարիի որդուն, Ասորեստան երկրի թագավորին. նա նվաճեց Արմե երկիրը, երկրի թագավորական քաղաք Նիխիրիանին, նրանք խոնարհվեցին Սարդուրի, Արգիշտիի որդու առաջ։»[2]

Այդ տեքստը խոսում է Սարդուրի գարնանային և աշնանային երկու արշավանքների մասին, որ նա կատարել է մեկ տարվա ընթացքում։ Մեկն ուղղվել է Անդրկովկաս, Սևանա լճի շրջանը, իսկ երկրորդը՝ Ասորեստան և նրան հարող Արմե երկիրը, որը հեռավոր Արաբեայի հետ նույնացնելու ոչ մի հիմք չկա։ Որովհետև Սարդուրը Ասորեստանի դեմ պայքարում էր գլխավորապես արևմուտքում, ուստի կարելի է ենթադրել, որ Արմե երկիրն ու Նիխիրիանի քաղաքը գտնվում էին Ասորեստանից հյուսիս-արևմուտք. Տիգրիսի վերին հոսանքում, համենայն դեպս Եփրատ գետից դեպի արևելք։ Եթե մենք դուրս գցենք ուրարտական սոցիալական «նիր» վերջածանցը, Նիխիրիա քաղաքի անունը դարմանալի կերպով համընկնում է հնագույն հայկական Նեսլեր (Նեփեր, Նիրկերտ) քաղաքի անվան հետ, որի տեղում կառուցվեց Տիգրանակերտը։ Ավելի, ուշ այդ հին քաղաքի անունով են կոչվել մի ամբողջ մարզ և գետ, որը անտիկ հեղինակները ստուգաբանել են որպես «Նիկեֆորիոն» կամ «Նիկեֆորիոս», այսինքն՝ «հաղթական»։ Այս զուգադրությունը մեզ չափազանց արժեքավոր ցուցում է տալիս ինչ-

---

[1] Դիաուեխի երկրի տեղը որոշելիս հաշվի չի առնվում Զիվլինում գտնված Մենուայի արձանագրությունը, որ հրատարակել է Ի. Ի. Մեշչանինովը (Доклады Академии Наук СССР-В, 1931, էջ 69), որի մեջ պատմվում է Շաշիլու[նի] քաղաքը գրավելու մասին, իսկ ըստ այլ արձանագրությունների՝ այդ քաղաքը կոչվում էր Դիաուեխի երկրի «թագավորական քաղաք»։

[2] И. И. Мещанинов. Стела Сардура в Ване, суроб-Погос, Известия Академии Наук СССР, 1932, № 2, стр. 161.

պես Արմե երկրի տեղը որոշելու, այնպես էլ այն քաղաքի մեծ նշանակությունը պարզելու համար, որի տեղում Տիգրանը հիմնեց իր մայրաքաղաքը։

Այսպիսով, մ. թ. ա. VIII դարի ուրարտական տեքստը վկայում է Արմե երկրի մասին, որի անունը կապվում է հին-պարսկական արձանագրությունների Արմինա և հունական աղբյուրների Արմենիա երկրի հետ։

Եվ իրոք, ուրարտական սեպաձև արձանագրություններում երկրների անունների սովորական վերջածանցը «նի» վանկն է, որը միշտ չէ, որ միայն հոլովական վերջավորություն է տալիս, իսկ Արմե անվան երկրորդ մասի սեպագիր նշանը կարող է տալ ինչպես մե, այնպես էլ մի վանկը։ Ուստի այդ երկրի լրիվ ձևը կլինի Արմենի կամ Արմինի։

Արմինա տերմինի մեր այս բացատրությունը, իմ կարծիքով, ավելի շատ հիմք ունի, քան վաղուց արտահայտված այն ենթադրությունը, թե Արմինա տերմինը կազմված է երկու մասից—հար և մինի և ըստ սեմական լեզուների՝ նշանակում է «Մինի երկրի լեռներ»։ Այս մեկնաբանությունը երբեք հաջող չի համարվել։

Մարկվարտը, վերլուծելով հին-պարսկական Արմինա տերմինը, ինչպես ինձ թվում է, ճիշտ կերպով ենթադրել է, որ այն ծագում է Արմ արմատից և ուրարտական իմի վերջածանցից, որը միդիական ազդեցությամբ ընդունել է ինա ձևը, բայց նրա դատողությունները հայերի գաղթի և Հոմերոսի արիների հետ նրանց ունեցած կապի մասին համոզիչ չեն՝ հիմնավորված չլինելու պատճառով։

Հին հայերեն տերմինների և ուրարտական տերմինների կապերը չեն սահմանափակվում տոպոնիմիկայով։ Լիակատար հիմունքով նշվել է, որ հայ իշխանների հնագույն տոհմական ազգանունները դուրս են գալիս հայկական պետության սահմաններից, կապվելով Ուրարտուի հետ ոչ միայն իրենց արմատներով, այլ նաև իրենց օնոմ ձևավորմամբ, այսինքն՝ ուրարտական սեպագրերում առանձնապես բնորոշ վերջածանցով։ Այդպես են Արշակունի, Արշարունի, Մանդակունի, Բզնունի, Ռշտունի հայկական հնագույն իշխանական (նախարարական) ազգանունները։ Այս հարցը բավականաչափ պարզաբանված է, և ես անհրաժեշտ չեմ համարում կանգ առնել սրա վրա։

Կրկին դառնանք Վանի թագավորությանը։

Մեր տրամադրության տակ եղած նյութերը թույլ են տալիս հետևելու Նաիրի-Ուրարտական ցեղերի միության աստիճանական աճմանը չորս դարերի ընթացքում և այդ միության հիմքի վրա Ուրարտու պետության կազմավորմանը։ Ուրարտուն արտացոլում է հին Արևելքի պետությունների բոլոր հիմնական գծերը. նա ևս արագ կերպով ընդարձակում է իր սահմանները և ամենադաժան ձևով պահպանում թե ազգագրական կազմով և թե կուլտուրայով միմյանցից տարբերվող տասը երկրներից բաղկացած պետական միավորումը։

Վերոհիշյալ պատճառներով էլ, երբ թուլանում էր պետական իշխանությունը, երբ թուլանում էր բռնության ապարատը, պետությունն արագորեն տրոհվում էր իր բաղկացուցիչ մասերին։

Այդպես է եղել Միտանյան և Խեթական թագավորությունների հետ, Ասորեստանի, Ուրարտուի, Բաբելոնի, Միդիայի և Պարսկաստանի հետ, այդպիսի վիճակ են ունեցել հին-արևելյան տիպի բոլոր պետությունները։

Նրանք քայքայվել են, չթողնելով իրենցից հետո էթնիկական հետ-

նորդներ՝ Հին Արևելքի հին պետությունների մեջ արդի ժողովուրդների նախնիքներ գտնելու որոնումներն ապարդյուն են անցնում։ Ապարդյուն են մնում այդ որոնումները, որովհետև ժողովուրդը (народность) դեռ չէր կազմում այդ տիպի պետությունների հիմքը։

Այդ իսկ պատճառով Առաջավոր Ասիայի հին պետությունները ժառանգներ են թողել կուլտուրայի գծով, բայց ոչ արյան գծով։[1]

Ուրարտուի պատմության մեջ շատ անգամ է պատահել, որ կենտրոնական պետական իշխանությունը թուլանալիս թագավորությունը քայքայվել է, և ուրարտական թագավորներն սրիպված են եղել նորից հավաքել-կազմել իրենց պետությունը։ Այդպես է եղել Սարդուրի՝ Թըգլատպալասարից պարտվելուց հետո և Սարգոնի՝ Ռուսայի դեմ ձեռնարկած հաջող արշավանքից հետո։ Սակայն այդ ժամանակ ուրարտական պետությունը դեռ շատ ներքին ուժեր ուներ, և եռանդուն թագավորների ջանքերով երկու անգամ կանխվել է Ուրարտուի վերջնական քայքայման վտանգը։

Ս. թ. ա. VII դարի երկրորդ կեսին քաղաքական իրադրությունն այնպես էր, որ Առաջավոր Ասիայի հզոր պետությունները ոչ մի ուժով չկարողացան կասեցնել իրենց անկումը։ Առաջինն ընկավ Ասորեստանը։

Միայն պաշտոնական փաստաթղթերին, մասնավորապես ասորեստանյան կառավարիչների թագավորական տարեգրություններին և նրանց արքունիքներից հանած նյութերին ծանոթ պատմաբանի համար տարօրինակ է թվում, որ դեռ VII դ. կեսերին իր հզորության գագաթնակետին գտնվող Ասորեստանը նույն այդ դարի վերջին դադարեց գոյություն ունենալուց։

Եթե մ. թ. ա. VII դ. կեսերի պաշտոնական թագավորական տարեգրությունները Ասորեստանի հաղթանակների մասին են խոսում, ապա այլ կարգի փաստաթղթեր լուսաբանում են Ասորեստանի թագավորներին առանձնապես անհանգստացնող իրադարձությունները։

Կույունջիկի արխիվում պահպանվել են մեծ թվով տեքստեր, ասորական հետախույզների զեկուցագրեր Ասորեստանի հարևան երկրներում տեղի ունեցած անցքերի մասին։

Նրանցից մենք իմանում ենք, որ ուրարտացիներն իրենց պետության հյուսիս-արևմուտքում ստիպված էին դիմագրելու ուրարտական գորքերին ջարդած կիմմերների ճնշմանը։ Պաշտոնական հաղորդագրությունները խոսում են Վանի թագավորության մեջ նրան ենթակա ցեղերի, մասնավորապես մանայացիների ապստամբությունների մասին, ինչպես նաև Ուրարտուի կազմի մեջ մտնող մի քանի երկրների կառավարիչների ու կուսակալների կողմից պետության կենտրոնում բարձրացված խռովության մասին։

Պահպանվել են նմանապես պատգամամատյաններ և Շամաշ աստծուն ուղղված հարցեր, որոնք արտացոլում են Ասուրհադդոնին և Աշուրբանիպալին համակած տագնապը։ Այդ հարցերով նրանք իրենց աստծուց հարցնում էին, թե արդյոք կհաջողվեն ուրարտացիների թագավոր Ռուսայի կամ կիմմերների ժողովրդի պլանները, կհաջողվեն արդյոք կիմմերյան, միդիական, մանայան ռազմիկների, կամ Վանա երկրում գտնվող սկյու-

[1] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 388.
[2] L. Waterman, Royal correspondence of the Assyrian Empire, I—II, 1930.

քական ռազմիկների պլանները։ Այդ փաստաթղթերից մենք իմանում ենք, որ ասորեստանցիները երկյուղ էին կրում ոչ միայն Առաջավոր Ասիայի պետությունների՝ Բաբելոնի, Մեդիայի և Մանայի զորքերից, այլև նաև մեծ չափով կիմմերների ու սկյութացիների ջոկատներից։

Հայտնի է նաև, որ Ասուրհադդոնը դաշն է կնքել սկյութացիների առաջնորդ Իարտատուայի (թերևս՝ Հերոդոտի Պրոտոթիոսի) հետ, նրան կնության տալով իր աղջկան։

Կիմմերները և սկյութացիները, որոնց հետ էին միանում նաև Առաջավոր Ասիայի՝ խոշոր պետությունների կախումից ազատվող մանր երկրները, շարունակ հարձակվում էին Ասորիստանի սահմանների վրա, և անհրաժեշտ էր լինում անընդհատ պայքար մղել նրանց դեմ։ Ասորիստանի թագավորական տարեգրություններում նշվում է «հեռավոր երկրից եկած» կիմմեր Տեուշպայի դեմ տարած հաղթությունը և սկյութացի Իշպակիի զորքերի պարտությունը։ „Umman manda" տերմինի տակ, որ նշանակում է «մանդայան ռազմիկներ», որոնցից մեկի գլուխ էր կանգնած Տեուշպան, մի քանի հետազոտողների կարծիքով, ասորեստանցիները հասկանում էին ոչ միայն մեդիական պետության զորքերը, այլև Առաջավոր Ասիայի վաչկատուն ժողովուրդների և առանձին փոքր երկրների բազմատեսակ ջոկատները։

Եվ, առհասարակ, կիմմեր-սկյութական ներխուժումը Առաջավոր Ասիա՝ նոր լույսի տակ է պատկերանում մեզ։ Իր էությամբ այդ ներխուժումը ոչ այնքան նոր ցեղերի գաղթն էր հյուսիսից, որքան Առաջավոր Ասիայի քաղաքական իրադրության բարդացման արտաքին արտահայտությունը VIII—VII դարերում։ Հենց այդ ժամանակ էլ նկատվում է այն առանձին երկրների ինտենսիվ բարձրացումը, որոնք սկսել էին վճռական պայքար մղել այն պետությունների դեմ, որոնց կազմի մեջ էին մտնում, կամ որոնց ենթարկված էին նրանք։

Ինչու կիմմեր-սկյութական ներխուժումը չէր կարող ավելի շուտ կատարվել։ Գարգապես այն պատճառով, որ հող չուներ և չէր կարող հաջողության հույս ունենալ։ Կիմմերների և սկյութացիների վաչկատուն փոքրաթիվ ջոկատներն օգնում էին փոքր երկրներին անջատվելու, գլխավորելով այդ շարժումը։

Վերոհիշյալ հանգամանքներով կարելի է բացատրել ոչ միայն հյուսիսից վաչկատուն ցեղերի Առաջավոր Ասիա ներխուժելու բուն իսկ հնարավորությունը, այլև նաև նրանց ապշեցուցիչ հաջողությունն ընդդեմ արտաքուստ հզոր հին պետությունների։

Այդ ժամանակներում է դնում հայկական պատմական տրադիցիան նաև առաջին ինքնուրույն հայ թագավորին։ Մովսես Խորենացին Հայոց պատմության I գրքի 21-րդ գլուխը նվիրում է Սարդանապալի ժամանակակից «Ակայորդի Գարույրին, Հայաստանի առաջին թագակրին»։

Բերում եմ Մովսես Խորենացու տեքստը. «Ասորեստանցիների թագավորության ժամանակ և Շամիրամից կամ Նինոսից հետո եղած ժարդկանցից վերջինը մեր Գարույրն էր Սարդանապալի օրոք։ Սա մեծ օգնություն

[1] J. A. Knudtzon. Assyrische Gebete an den Sonnengott, I, II, 1893.

[2] C. J. Gadd. The Fall of Nineveh, 1923, էջ. 14; M. Streck. Assurbanipal und die letzten assyrischen Könige. I, 1916, 375.

ստացավ մարացի Վարբակից, որը խլեց թագավորությունը Սարդանապալից... Վարբակը, ծագումով մեդացի, այդ ամբարգույն աշխարհի մի փոքր ծայրագավառից, կենցաղում շատ խորամանկ, կռվի մեջ խիզախ, իմանալով Թոնոս Կոնկոլերոսի տմարդի բնավորությունը և հեշտասեր թուլամորթությունն ու ծուլությունը, սիրալիր վերաբերմունքով ու առատաձեռնությամբ ավելացնում է իր բարեկամների թիվը այն քաջ ու պիտանի մարդկանցից, որոնք այն ժամանակ մեծ հաստատությամբ հայտնապես կառավարում էին Ասորեստանի աշխարհակալ պետությունը։ Իր կողմն է գրավում նաև մեր քաջ նախարար Պարույրին, թագավորությունն ձև ու պատիվ խոստանալով նրան հավաքում է նաև նիզակ, աղեղ և սուր գործածելու մեջ հաջողակ մեծ թվով քաջ մարդկանց։ Եվ այդ ձևով թագավորությունը Սարդանապալից գրավելով, տիրում է Ասորեստանին և Նինվեին։ Սակայն Ասորեստանի վրա ուրիշ վերակացուներ կարգելով, թագավորությունը Մարաստան է փոխադրում։

Բերված հատվածի մեջ պատմված է հայ իշխան Պարույրի մասին, որն օգնություն է ցույց տվել մեդիացի Վարբակին, որը ջախջախել է Ասորեստանին, իսկ դրա փոխարեն Վարբակը ինքնուրույնություն է տվել նրան և Հայաստանի թագավոր հռչակել։

Մ. Զամչյանն իր Պատմության մեջ, մեզ անհայտ աղբյուրների հիման վրա, բերում է Հայաստանի հնագույն կառավարողների ցուցակը, ճշտորեն ցույց տալով նրանց թագավորելու ժամանակը։ Ըստ երևույթին, պատմության այդ հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է մի ձեռագիր, որի մեջ կառավարողների ցուցակում մատնանշումներ են եղել նրանցից յուրաքանչյուրի կառավարման տևողության մասին։ Զամչյանը Պարույրի կառավարման սկիզբը դնում է մ. թ. ա. 748 թվականին, իսկ Սարդանապալի մահը և ասորեստանյան լծի տապալումը՝ 743 թվականին։

Ս. Էմինը ենթադրում էր, որ Պարույրը չի եղել առաջին հայ թագավորը, այլ միայն Հայկական հարստության վերականգնողը։ Հովհաննես կաթուղիկոսի (IX դ. վերջը և X դ. սկիզբը) և Սամուել Անեցու (XII դ.) մատնանշումների հիման վրա նա եզրակացնում է, որ Հայկ Նահապետի տասերորդ շառավիղից՝ Անուշավանից հետո տեղի է ունեցել հեղաշրջում, իշխանությունը գավթել են օտար կառավարողները, և միայն Պարույրը վերականգնել է Հայկի դինաստիան։[1]

Վաղուց արդեն նշվել է Մովսես Խորենացու Պատմության I գրքի 21-րդ գլխի ժոտիկությունն ու կախումը III դ. վերջին և IV դ. առաջին կեսի սկզբի դրող, եկեղեցու պատմության հեղինակ Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությունից, որը հայերեն թարգմանվել է V դարի առաջին կեսին։

Եվսեբիոսը, իր հերթին, պատմական այդ դեպքն ընդօրինակել է Կտեզիոսից և Դիոդոր Սիկիլիացուց (II գիրք, XXIV գլ.)։

Եվսեբիոսը, նկարագրելով Ասորեստանի թագավոր Սարդանապալի ժամանակը, պատմում է հետևյալը. «Ոմն. Վարբակ (կամ Արբակ), միդիացի, առաքինի մի մարդ, քաջ և հոգու հիանալի հատկությամբ ուժված, միդիացիների զորապետն էր, մեկը նրանցից, ովքեր ամեն տարի գնում էին

[1] Н. О. Эмин, Династический список хайкидов в Истории Моисея Хоренского, 1884.

նինվե։ Իր զորապետության ժամանակ, բաբելական զորավարի հետ ունեցած անձնական տեսակցության միջոցին նա բարեկամացավ վերջինի հետ և նրա խնդիրքով խորտակեց Ասորեստանի թագավորությունը։ Եվ մի այլ տեղում՝ «Թոնոս-Կոնկոլերոսը, որին հույները Սարդանապալ էին անվանում, պարտություն կրելով Վարբակից և Բելեսիսից, իրեն բոցերի ճարակ դարձրեց... Ասորեստանի թագավորությունը խլելով, Արբակը Բելեսիսին նշանակեց բաբելացիների թագավոր, իսկ ինքը դարձ փոխադրեց Միդիա»։[1]

Այսպիսով Եվսեբիոսը, ըստ Դիոդորի, պատմում է Վարբակի և Բելեսիսի անձնական տեսակցության և դաշինք կնքելու, Ասորեստանի դեմ նրանց հաղթություն տանելու և Արբակի Միդիա անցնելու մասին։

Խորենացու տեքստի համեմատությունը Եվսեբիոսից բերված հատվածի հետ՝ ցույց է տալիս նրանց մոտիկ նմանությունը, միայն այն տարբերությամբ, որ Խորենացին ոչինչ չի ասում Բելեսիսի մասին, այլ միայն բերում է Պարույր հայ իշխանին վերաբերող պատմությունը։

Խորենացու և Եվսեբիոսի տեքստերի այդ համեմատությունը բավական էր հայ պատմիչի տեղեկությունները հիմքից դուրկ համարելու համար։

1945 թվին լրանում է Մովսես Խորենացու գրքի առաջին տպագիր հրատարակության 250 տարին և մոտավորապես 200 տարի այն օրից, երբ առաջին անգամ Լ-Կրոզը վեճ հարուցեց Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունների արժանահավատության մասին։ Մոտ 200 տարի տեղի է ունենում Խորենացուն դատելու պրոցեսը, ընդ որում որոշ դեպքերում մեղադրյալ է հանդիսանում ինքը պատմագիրը, իսկ այլ դեպքերում՝ նրա օգտագործած աղբյուրները։

Բ. Պատկանյանը գրել է. «Այն տեղեկությունը, որ պահպանվել է Մովսես Խորենացու մոտ Հայաստանի նվաճման մեջ Պարույր հայ թագավորի մասնակցության մասին, մեր կարծիքով, զուրկ է պատմական հիմքից, որովհետև այդ տեղեկությունը հորինված է որոշ նպատակով՝ հայերին մասնակից դարձնել Առաջավոր Ասիայում տեղի ունեցած մի այնպիսի կարևոր իրադարձության, որի մեջ, Կտեզիասի կարծիքով, գլխավոր դերերը խաղացել էին իրենց միջև Արբակն ու Բելեսիսը։ Բայց որովհետև 715 թվին Ասորեստանի ոչ մի նվաճում տեղի չի ունեցել միդիացիների կողմից, ուստի հայերի մասնակցությունն այդ իրադարձության մեջ կարելի է համարել Մովսես Խորենացու կամ նրա աղբյուրի ֆիկցիա»։[2]

Գ. Խալաթյանցը այս առթիվ գրում է. «Այստեղ, ինչպես և նախընթաց դեպքերում, մենք տեսնում ենք, որ հունական աղբյուրներից փաստերը վերցվում և հարմարեցվում են հայերին»։[3]

Իրոք, Մովսես Խորենացու տեքստն այնքան մոտ է Եվսեբիոսի տեքստին, որ նրանց կախման հարցը միանգամայն ակներև է։

Իրոք, կարող է թվալ, որ Խորենացին իր Պատմության մեջ է մտցրել Եվսեբիոսի ժամանակագրությունից վերցրած տեղեկություններ, ավե-

---

[1] Եվսեբիոսի ժամանակագրության տեքստը բերում եմ ըստ Գ. Խալաթյանի։

[2] К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, 1881, стр. 162.

[3] Г. Халатьянц, Армянский эпос в Истории Моисея Хоренского, 1896, стр. 158.

լացնելով նրանց իսկ հորինած Սկայորդու որդի Պարույրի վերաբերյալ պատմությունը։

Իրոք, կարող է թվալ, որ Խորենացին մի անբարեխիղճ պատմագիր է, որ հաղորդում է անճիշտ, իր հորինած հերքանքները հայերի հնագույն պատմության մասին։ Ուստի պատմաբանները մինչև այսօր էլ անտեսում են Մովսես Խորենացու տեղեկությունները առաջին հայ թագավորի՝ Պարույրի մասին։

Սակայն հարցն անհամեմատ ավելի բարդ է։

1923 թվականին անգլիացի գիտնական տեղը հրապարակեց Բրիտանական թանգարանի մի սեպագիր ազյուսակ, որը պարունակում է բաբելական Նաբուպալասար թագավորի իշխանության 10-ից մինչև 17 տարիների, այսինքն մ. թ. ա. 616-ից մինչև 609 թվականների անցքերի նկարագրությունը։[1] Ասորեստանի վերջին տարիները նկարագրող այս ուշագրավ տեքստը անցքերը թվում է ոչ միայն ըստ տարիների, այլև ըստ ամիսների։

Նաբուպալասարը, գահ բարձրանալով Աշուրբանիպալի մահվան տարին, 616 թվականին, արդեն հաջող պայքար է մղում ասորեստանյան և մանայան բանակների դեմ։

615 թվականին նա պաշարեց Աշուրը, ընդ որում բաբելական ժամանակագրությունը պատմում է քաղաքի վրա անհաջող գրոհ կատարելու, պաշարումը վերացնելու և Նաբուպալասարի բանակի Բաբելոն վերադառնալու մասին. հաջաձայն այդ ժամանակագրության, նույն տարին Ասորեստանի արևելյան մասում հայտնվեցին միդիացիները և գրավեցին Ասորեստանի գավառներից մեկը։

Միդիացիների պայքարը ասորեստանցիների դեմ ավելի հաջող էր։ 614 թվականին նրանք պաշարեցին Նինվեն և Աշուրը։ Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն գիմացավ պաշարմանը, բայց միդիացիները վերցրին Աշուրը և կործանեցին։ Ժամանակագրությունը պատմում է, որ Աշուրի ավերակների վրա տեղի ունեցավ Նաբուպալասարի հանդիպումը միդիական կիաքսար թագավորի հետ, որի հետևանքով ռազմական դաշինք կնքվեց։

612 թվականին այդ դաշինքին հարեցին վաչկատունները (unman manda)։ Վաչկատուն ասելով, ինչպես ցույց տվեց Գեդդը, պետք է հասկանալ ոչ միայն հատկապես սկյութացիներին, այլ նաև ուրիշ մանր բազմազան ջոկատներ։ Նույն տարին ամառը, Սիվան և Աբ ամիսներին գաշնակից զորքերը պաշարեցին Նինվեն. տեղի ունեցավ երկու ճակատամարտ, և Աբ ամսվա վերջին Նինվեն ընկավ։

Ժամանակագրությունը պատմում է ապորական թագավոր Սինշարիշկունի մահվան, քաղաքը կողոպտելու և կործանելու մասին։ Ելուլյա ամսի 20-րդ օրը Կիաքսարը վերադարձավ Միդիա։

Մենք տեսնում ենք, որ Եվսեբիոսի և Խորենացու տեքստերը հենց նույն անցքերի մասին են պատմում, ինչպես և Նաբուպալասարի ժամանակագրությունը։ Այս մասին չկա և ոչ մի տարակուսանք։

Խորենացին պատմում է Պարույր հայ իշխանի մասին, որն ապրել է Աշուրբանիպալի ժամանակ, որին պատմագիրը, ինչպես և անտիկ շրջանի

[1] C. I. Gadd, The Fall of Nineveh, 1923 թ.

դրույները անվանում են Սարդանապալ, այսինքն՝ ասորական վերջին թագավորների հավաքական անունով։ Իսկ Վարրակ անվան տակ պետք է հասկանալ միդիական Կիաքսար թագավորին կամ՝ միդիական զորապետին, հնարավոր է նաև՝ նրանց երկուսին միասին, այսինքն՝ որպես հավաքական անձնավորություն։ Բյոնիոը Վարրակի անունը կապում է բաբելոնյան ժամանակագրության մեջ վաս պահպանված՝ վաչկատունների ջոկատների պետի Արպադու անվան հետ, որը նա կարդում է որպես Արպադու, մինչդեռ Վ. Վ. Սարուվեն արամատիր է կարդալու Բապադու։

Եվսեբիոսի ժամանակագրությունը, ըստ Դիոդորի, նույնպես այն փասաերի մասին է հաղորդում, ինչպես և Նաբուպալասարի ժամանակագրությունը—Վարբակի (Կիաքսարի) և Բելեսիսի (Նաբուպալասարի) հանդիպման ե դաշինք կնքելու, նրանց՝ Ասորեստանի դեմ տարած հաղթության, Ասորեստանի թագավորի մահվան ե, վերջապես, Վարրակի (Կիաքսարի) Միդիա վերադառնալու մասին։

Պետք է նկատել, որ Վարրակի ե Կիաքսարի նույնացումը մի դժվարության է հանդիպում, այն է՝ Եվսեբիոսի բերած միդիական թագավորների ցուցակում, որ նրանցից վերցրել է Խորենացին, Արբակի անունը մտցված է Կիաքսարի հետ միասին։ Սակայն, ըստ երևույթին, այդ նրանով է բացատրվում, որ Եվսեբիոսն իր բերած տեղեկությունները վերցրել է դանադան աղբյուրներից ե միդիական թագավորի անունը փոխարինել է զորապետի անունով։ Կոմպիլյատորը չէր կարող հասկանալ, որ նրա երկու աղբյուրներում խոսքը վերաբերում է ժամանակակիցներին, և թվարկելիս թագավորների ու զորապետների ցուցակը դրել է հաջորդական կարգով։

Նույնպես և Խորենացին, ինչպես մենք կտեսնենք քիչ հետո, ժամանակակից հայ կառավարողներին, Հայաստանի տարբեր մարզերի կառավարողներին դրել է մի շարքում։ Այս պատճառով էլ Մ. Չամչյանը նրանց կառավարման տարիները գումարելիս, սկսած վերջինից՝ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակից և մինչև Աշուրբանիպալի ժամանակի Պարույրը, մոտավորապես 130 տարվա սխալ է կատարել։ Պարույրի հետ կապված դեպքերի սխալ թվագրումը կրկնել են նաև մյուս պատմագիրները, չնայած որ հունական աղբյուրների Սարդանապալը, ինչպես արդեն վաղուց պարզված է, համապատասխանում է Աշուրբանիպալին և Ասորեստանի վերջին թագավորին։

Սակայն մեր թեմայի համար առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, որ Եվսեբիոսի ժամանակագրությունը և Խորենացու Պատմությունը, խոսելով նույն այն անցքերի մասին, ինչպես և Նաբուպալասարի ժամանակագրությունը, պարունակում են մեկը մյուսից տարբեր տեղեկություններ, որոնք համընկնում են Նաբուպալասարի ժամանակագրության տվյալներին, որպիսի ժամանակագրությունը ոչ մի կերպ չէր կարող նրանց հայտնի լինել։ Եվսեբիոսը խոսում է Կիաքսարի (Վարբակի) միայն մեկ դաշնակցի՝ Նաբուպալասարի (Բելեսիսի) մասին, թեև նրա աղբյուր Դիոդորը հիշատակում է նաև արաբական թագավորին, բաբելական թագավորի բարեկամին։ Մյուս կողմից, Խորենացին տեղեկություն է բերում Սկայորդու որդի Պարույրի, կախյալ երկրներից մեկի, այսինքն՝ այն երկրներից մեկի իշխանի մասին, որոնք ոգնել են միդիացիներին և բաբե-

լացիներին Նինվեն վերցնելիս, ինչպես այդ ցույց է տալիս Նաբուպալասարի ժամանակագրությունը, «Մանդայան ռազմիկներ» անվանելով նրանց։ Հերոդոտը, խոսելով նույն փաստի մասին, պատմում է, որ, երբ Կիաքսարը պաշարել էր Նինվեն, սկյութական մեծ զորք եկավ Միդիայի թագավոր Մադիայի, Պրոտոթիոսի, այսինքն ասորական աղբյուրներում հիշատակվող Բարտատուայի որդու առաջնորդությամբ (I, 103)։ Այս Մադիային կամ Մադիոսին Ստրաբոնը անվանել է կիմմեր։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Պարույրի հայրը Սկայորդի անունն է կրում, իսկ Հայոց պատմության մի քանի ձեռագրերում Սկայորդի անունը անջատ է գրվում—Սկայ և որդի։ Այս անունը թարգմանաբար նշանակում է «հակայի որդի» կամ «սկյութացու որդի»։ Եվ միանգամայն ճիշտ է Գ. Ա. Ղափանցյանի որոնումների ուղղությունը, երբ նա Խորենացու Պարույրին նույնացնում է ասորական աղբյուրներում հիշատակվող սկյութական առաջնորդ Բարտատուայի հետ։ Ն. Յա. Մառը վաղուց արդեն բացատրել է, որ վրացերեն «դիմիր»—«հերոս» տերմինը կապված է կիմմերների ցեղային անվան հետ։ այնպես, ինչպես հայերեն «հակա» անունը սկյութացիների—սակերի անվան հետ։ Հայ Արշակ թագավորի անունը ևս Ն. Յա. Մառը կազմված է համարում երկու մասից—Ար և շակ, երկրորդ մասը նույնպես կապելով սկյութացիների—սակերի անվան հետ։

Այն հետազոտողները, ովքեր Խորենացուն մեղադրել են անբարեխղճության, կեղծիքի, անտիկ և բյուզանդական պատմագիրների պատմածները որոշ փոփոխություններով արտագրելու և հայկական մտացածին անուններ մտցնելու մեջ, հաշվի չեն առել մի չափազանց կարևոր հանգամանք—հենց այն, որ Մովսես Խորենացին վաղ միջնադարի գրող է, ինչպես արդեն նշել է Մառը Դ. Խալաթյանի գրքի մասին գրած իր գրախոսականում։

Նրանք նկատի չեն ունեցել նաև, որ Խորենացու տեքստի կախումը նրա օգտագործած պատմագիրների տեքստից մի յուրաատեսակ գրական պրիոմ է։

Նրանք հաշվի չեն առել, որ Խորենացու ժամանակ հենց այդպես էին գրում պատմությունը, և որ միջնադարյան հայ պատմագիրը, հնագույն ժամանակների մասին պատմելով, չէր էլ կարող այլ կերպ գրել։ Նրանք չէին կարող հաշվի առնել այդ, որովհետև Խորենացուն մոտեցել են իրենց ժամանակի և ոչ թե միջնադարյան գիտության պահանջներով։

Մովսես Խորենացին Հայաստանի հնագույն պատմությունը գրելիս որպես հիմք վերցրել է իր ձեռքի տակ եղած պատմագիրների տեքստը, տվյալ դեպքում, հավանորեն Եվսեբիոսի հայերեն թարգմանությունը, և նրա մեջ մտցրել է իր աղբյուրների, մեղ չհասած ժամանակագրությունների, ինչպես նաև ժողովրդի մեջ պահպանված լեգենդաների, պատմվածքների ու երգերի տեղեկությունները։ Դրանց մի մասը նա բերել է բառացի, մի մասը՝ վերապատմելով։ Որ բանը հենց այդպես էլ եղել է, դրանում մեզ համոզում է Խորենացու տեքստի համեմատությունը անտիկ շրջանի այն պատմագիրների տեքստերի հետ, որ բերել են Խորենացուն կամ աղբյուրը՝ Մար-Աբաս Կատինայի գիրքը կեղծիքի մեջ «բռնող» հետազոտողները։

Վերցնենք, օրինակի համար, Հայոց պատմության I գրքի 16-րդ

գլուխը, որտեղ պատմվում է Ասորեստանի Շամիրամ թագուհու ձեռքով Վան քաղաքը շինելու մասին։

Գ. Խալաթյանը պարզելով այդ գլխի տեքստի կախումը Դիոդորից, Հովսեփ Փլավիոսից ու Եվսեբիոսից, գտնում էր, որ Խորենացին իր Պատմությունը կազմել է ազատ հավելումներով, վերապատմելով վերոհիշյալ պատմագիրներին, որոնք նկարագրել են Սեմիրամիդայի շինարարությունը Բաբելոնում և Եկբատանում։[1] Սակայն նա թերագնահատել է այն, որ Խորենացին Շամիրամի՝ Վանում կատարած շինարարությունը նկարագրելիս այնպիսի մանրամասն տեղեկություններ ե բերում, որոնք կարող են միայն Վանին վերաբերել։ Հայոց պատմության մեջ ճշգրտորեն նկարագրված է Վանի ժայռը, նրա տեղադրությունը, նրա ձևը, այրերի ու սեպագրերի դասավորությունը, և մեծ չափազանցություն չի լինի այն պնդումը, որ մինչև վերջին ժամանակները Վանի ժայռի ամենամանրամասն ու ճշգրիտ նկարագրությունները Մովսես Խորենացու և 1828 թ. Վան այցելած ֆրանսիացի գիտնական Շուլցի նկարագրություններն են եղել։ Դ. Խալաթյանը գտնում էր, որ Շամիրամի շինարարության մասին պատմելիս Խորենացին կարող էր ելնել տեղագրական անուններից։ Բայց ինձ թվում է, որ պետք է հակառակ կարծիքի լինել, այն է՝ տեղագրական անունները կապված են ժողովրդական ավանդությունների հետ, որոնք հազիվ թե կախում ունեցած լինեին Դիոդորից, Հովսեփ Փլավիոսից և Եվսեբիոսից։ Չէ՞ որ մեզ հայտնի է Շամիրամի վերաբերյալ ժողովրդական ավանդությունների մի ընդարձակ ցիկլ։ Հավանորեն դրանք էլ հենց եղել են Խորենացու գլխավոր աղբյուրը 16-րդ գլուխը գրելիս։

Կրկին դառնանք Խորենացու Պատմության 21-րդ գլխին և տեսնենք՝ արդյոք նրա մեջ շարադրված իրադարձությունները համապատասխանում են այն ժամանակվա, այսինքն Ասորեստանյան թագավորության անկման ժամանակվա քաղաքական իրադրությանը։

Սակայն Պարույրին անցնելուց առաջ նախ քննենք նրա հոր՝ Սկայորդու մասին եղած տեղեկությունները, որ Խորենացին բերում է որպես 23-րդ գլխի հավելում։ Այստեղ մենք կարդում ենք. «Որովհետև Նաբուգոդոնոսորի թագավորությունից ութսուն, ավելի կամ պակաս տարի առաջ այս Սենեքերիմը Ասորեստանի թագավորն էր, որը պաշարեց Երուսաղեմը Հրեաստանի Եղեկիա առաջնորդի ժամանակ. Սենեքերիմի որդիները՝ Ադրամելը և Սանասարը, Նրան սպանելով, փախան, եկան մեզ մոտ։ Նրանցից մեկին, այսինքն՝ Սանասարին մեր քաջ Նախնի Սկայորդին բնակեցրեց նույն Ասորեստանի սահմանների մոտ, մեր երկրի հարավ-արևմուտքում։ Նրա սերունդը բնակվեց Սիմ կոչված լեռան վրա։

Ասորեստանի Սինախերիբ թագավորի՝ իր որդիների ձեռքով սպանվելու վերաբերյալ այս նույն պատմությունը կա և Բիբլիայում՝ Թագավորաց գրքում և Եսայու մարգարեության մեջ, ընդ որում հին-եբրայեցերեն տեքստում Արարատ (Ուրարտու) երկիրը փախած որդիները կրում են Ադրամելեխ և Շարացեր, իսկ հայերեն թարգմանության մեջ՝ Ադրամելիք և Սարասար անունները։ Հովսեփ Փլավիոսը, նույն այդ պատմությունը

[1] Г. Халатьянц. Армянский эпос в Истории Моисея Хоренского, 1896, стр. 145.

վերցնելով Բերոսից, Սինախերիբի որդիներին անվանում է Ադրամելեք և Սելենար։

Սակայն ասորական աղբյուրներից պարզվում է, որ Սենաքերիբն սպանվել է մ. թ. ա. 681 թվականին իր որդի Արադ-Բելիտի ձեռքով։ Բիբլիական Շարացերի մեջ տեսնում են զորապետ Նաբուշարուսուրի 691 թ. էպոնիմը։ Ասորեստանի գահ բարձրանալուց հետո սպանողները փախել են Ուրարտու երկիրը։[1]

Այսպիսով, Խորենացու տեքստից մենք իմանում ենք, որ Սկայորդին եղել է Ասորեստանի Սինախերիբ և Ասարհադդոն թագավորների ժամանակակիցը, հետևապես նաև ուրարտական Ռուսա թագավորի (Արգիշտիի որդու), Կարմիր-բլուրի բերդը կառուցողի ժամանակակիցը։

Սկայորդին, ըստ Խորենացու, եղել է Ասորեստանին սահմանակից և, Բիբլիայի հավաձայն, Ուրարտուի կազմի մեջ մտնող երկրի իշխանը, բայց ոչ թագավորը։ Սաբունի լեռները (Սիմ լեռը) գտնվում էին այդ երկրի հարավ-արևելյան սահմանների մոտ։

Առանձին ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Սասունի ժողովրդական էպոսի մեջ պահպանվել է այդ պատմության ամենահին ճյուղը։ Էպոսի հերոսներ Սանասարը և Բաղդասարը սպանում են կռապաշտ խալիֆին, որն էպոսի մի քանի պատումներում անվանված է Սենեքերիմ։ Առանձնապես ուշագրավ է, որ Խորենացու բերած Սանասար անունը համընկնում է Սասունի էպոսի հերոսի անվան հետ և տարբերվում է Բիբլիայում Հովսեփ Փլավիոսի կողմից հիշատակված նույն անունից։ Այլ ևս որոշ չափով ժամանակում է «Հայոց պատմության» հեղինակի աղբյուրները, որը, ըստ երևույթին, լայն չափերով օգտագործել է տվյալ դեպքում հայկական էպիքական դրույթները։

Սկայորդու որդին՝ Պարույրը, այսպիսով, ժամանակակից է Աշուրբանիպալին և Ասորեստանի վերջին աննշան թագավորներին։ Ուրարտուում այդ ժամանակ իշխում էին Սարդուր և Երիմենա թագավորները, որոնցից ոչ մի սեպագիր արձանագրություն չի հասել մեզ։ Նրանցից առաջինը հայտնի է Աշուրբանիպալի տարեգրությունից, իսկ երկրորդն իր որդու արձանագրություններից։

Ըստ երևույթին, Ուրարտուի պետությունը, ինչպես և Ասորեստանը, ծանր ժամանակներ էր ապրում, նա չէր ժասնակցում իր դարավոր թշնամի Ասորեստանի դեմ մղվող պատերազմին, և, ընդհակառակը, Ասորեստանի հակառակորդները 608 թվականին արշավանք սկսեցին Ուրարտուի դեմ։

Նաբուպալասարի բաբելական ժամանակագրությունից մենք իմանում ենք, որ միդիացիների և բաբելացիների դաշնակից զորքերը Նինվեի վրա արշավելիս օգտվել են վաշկատունների (կիմմերների, սկյութացիների) և ժանր երկրների աջակցությունից։ Այդպիսի երկրներից մեկի, այն է՝ Ուրարտուի կազմի մեջ մտնող և Ասորեստանի հյուսիս-արևմտյան սահմանի մոտ գտնվող երկրի իշխողն էր Սկայորդու որդի Պարույրը, որն օգնեց Կիաքսարին և դրա փոխարեն ստացավ անկախություն—արքայական թագ։ Այդ տեղի ունեցավ մ. թ. ա. 612 թվականին։

---

1 Б. А. Тураев, История Древнего Востока, II, 1935, стр. 50.

Այսպիսով, պարզվում է այն անցքերի թվականը, որոնց մասին պատմում է Խորենացին Հայոց պատմության I գրքի 21-րդ գլխում։ Այժմ մենք պետք է կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչու էր մեր պատմագիրը Պարույրին հայոց թագավոր համարում։

Հավանորեն Պարույրը Ուրարտուի կազմի մեջ մտնող Արմե (Արմինի) երկրի, հենց այն Արմե երկրի իշխանն էր, որը հիշատակվում է Արգիշտիի որդի Սարդուրի արձանագրության մեջ։ Այդ երկիրը գտնվում էր հենց Ասորեստանի սահմանների մոտ, նրա անուղղակի ազդեցության ու բնականաբար կապվում է հին-պարսկական Արմինա տերմինի հետ, իսկ նրա գլխավոր քաղաքը այն քաղաքի Նիխեր, Նիրկերտ անվան հետ, որի տեղում շինվեց Տիգրանակերտը։ Այսպիսով, Պարույրը, ինչպես ենթադրում եմ ես, այն երկրի իշխանն էր, որը հայկական ցեղային թագավորության հիմնական միջուկն էր կազմում։

Ես նշեցի, որ մ. թ. ա. VI դ. վերջերին Առաջավոր Ասիայի խոշոր պետությունների՝ Ասորեստանի և Ուրարտուի քայքայման ու տրոհման հետևանքով Հայկական բարձրավանդակում և Հյուսիսային Միջագետքում ստեղծվում էին այդ ժամանակ իրենց ինքնուրույնությունն ստացած մանր երկրների միություններ։

Երկրների մի այդպիսի միություն, որը, իմ կարծիքով, այդպես կոչվեց դեռ մ. թ. ա. VIII դարի կեսերի ուրարտական տեքստերում հիշատակվող և այդ միության մեջ գլխավոր դիրք գրավող Արմե (Արմինի) երկրի անունով, ստեղծվել էր նախկին Վանի թագավորության հարավ-արևմտյան մասում։

Պարսիկները այդ միությունն անվանում էին Արմինա, հույները՝ Արմենիա, իսկ բաբելացիները՝ ընդհուպ մինչև մ. թ. ա. V դ. վերջերը շարունակում էին անվանել Ուրարտու (այսինքն՝ Ուրարտու։

Այն ժամանակ, երբ Հայկական բարձրավանդակի հարավ-արևմտյան մասում կազմակերպվում էր Արմինա երկրների միությունը, հյուսիս-արևմուտքում ամրապնդվում էր մի այլ միություն, որը գտնվում էր դարեթական երկրների, գլխավորապես Փոքր Ասիայի երկրների ողորտում։ Այս միությունը, ինչպես և այն երկրների միությունը, որի հիմքի վրա գոյացավ վրաց ժողովուրդը, յուրացրել և վերամշակել է գլխավորապես խեթական թագավորության կուլտուրական ժառանգությունը։

Ն. Ադոնցը միանգամայն իրավացի կերպով ցնդում էր, որ Հայաստանի բաժանումը երկու մասի վերաբերում է հնագույն ժամանակներին, մինչև 189 թվականը, երբ, համաձայն Ստրաբոնի, Արտաքսիսը (Արտաշեսը) և Զարիադրը, Հայաստանը երկու մասի բաժանելով, իրենց անկախ թագավորներ հայտարարեցին։ Հայաստանի բաժանումը երկու մասի գոյություն է ունեցել աքեմենյան շրջանում, իսկ Արևելյան և Արևմտյան Հայաստանի մասին, որոնք սատրապների հետ միաժամանակ ունեին նաև տեղական թագավորներ, պատմում է նաև Քսենոփոնը մ. թ. ա. մոտավորապես 400 թվականին, որը նշում է նմանապես այդ երկու մարզերի կուլտուրայի, մասնավորապես բնակչության տարբերությունը։ Արևելյան Հայաստանում կառավարող է եղել Օրոնտը (հայերեն Երվանդը), իսկ Արևմտյանում՝ Իրիրադը։

Հետագայում, Դավդամելայի ճակատամարտի ժամանակ, մենք կրկին

հանգիպում ենք հայկական երկու սատրապների—Օրոնտին և Միտրա-վասին։

Արևմտյան Հայաստանը մի ընդարձակ մարզ էր, որն իր կազմի մեջ ուներ մեծ թվով մանր երկրներ, որոնք երբեմն մոնում էին Վանի թագավորության կազմի մեջ և նրա քայքայումից հետո կազմում էին մի առանձին միություն. իսկ վերջինը գոյություն ուներ վերոհիշյալ Արմինա միության հետ միաժամանակ։ Հայ ժողովրդի առաջացման ժամանակ այդ մարզերը միակցվեցին, բայց հայերի կուլտուրայի մեջ եղած երկու աստիճանները շարունակում էին դրանից հետո ևս ապրել. այս հանգամանքը Ն. Յա. Մառը նշել է նաև լեզվական նյութի հիման վրա։

Իսկ նյութի մի ենթադրություն, թե Փոքր Հայքը եղել է հնագույն հայկական կենտրոնը. այսպես, Մարկվարտը նույնիսկ հայերի բոլոր միգրացիոն ալիքները բխեցնում է հենց այդ կենտրոնից, նշելով, որ հայերի գաղթելը Եվրոպայից Փոքր Ասիա մեր պատմական դիտելիքների սահմաններից դուրս է գտնվում։

Ես էլ գտնում եմ, որ հայ ժողովրդի ծագման հարցում մենք ոչ մի չափով չպետք է թերագնահատենք Եփրատ գետի վերին հոսանքի երկրների և Փոքր Հայքի նշանակությունը։ Դեռ Մարարոնը ժամանակ է, որ Հայաստանի սկզբնական մարզերը եղել են Ակիլիսենի (հայերեն Եկեղյաց) մարզը, այսինքն՝ այժմյան Երզնկայի շրջանը, և Սուպիրիտիսես—Շուպրիա մարզը, այսինքն՝ Տիգրիս գետի վերին հոսանքը։

Իմ աշխատության մեջ ես ավելի շատ ուշադրություն եմ նվիրում երկրորդ մարզին, լոկ այն պատճառով, որ նա ավելի լավ է լուսաբանված իմ մոտքի տակ եղած աղբյուրներով։ Կասկածից միանգամայն դուրս է, որ Արևմտյան Հայաստանի հնագույն կենտրոնի՝ Վերին Եփրատի վրա գտնվող Դարանաղյաց Անիի (Կեմախի) ուսումնասիրությունը բոլորովին անսպասելի այնպիսի աղբյուրներ է տալիս, որոնք արտացոլում են հայկական այս մարզի կապը հին-արևելյան հնագույն կուլտուրաների հետ։ Սակայն այդ ապագայի գործ է։ Մեզ համար առանձնապես հետաքրքրական է այն փաստը, որ Մարարոնը ևս տեղեկություններ է հաղորդում հայկական պետության կազմավորմանը նախորդող ժամանակաշրջանի հայ հնագույն կուլտուրայի մասին։

Ինսենը դեռ 1898 թ. հայկական ցեղային հայ տերմինը կապել է հաթ, խաթ, այսինքն՝ խեթական պետության ժողովրդի հետ, նկատելով հայերի կապը հեթիթների հետ, որը, անկասկած, ավելի մեծ հիմքեր ունի, քան հայերի անվան համեմատումը Պաֆոնիայի—Մակեդոնիայում գտնվող և փոյուգացիների հայրենիքը համարված երկրի անվան հետ։ Ինսենի աշխատության իրավացի, բայց չափազանց սուր քննադատությունը որոշ ժամանակով սառցրեց իր ուղղությամբ մեզ համար շատ հետաքրքրական այդ որոնումները, և միայն շատ ուշ այդ աշխատանքին ձեռնարկեց Դ. Ղափանցյանը, որը մեծ քանակությամբ նյութերի հիման վրա ցույց տվեց հայ և խաթական լեզուների նմանությունները։

Հայ տերմինը, որով իրենց կոչում են հայերը, վաղուց արդեն գրավել է հետազոտողների ուշադրությունը։ Դեռ Ռ. Պատկանյանն այն ենթադրությունն է արել, թե հայերն սկզբում եղել են առանձին ցեղ, որը տիրապե-

տություն ձեռք բերելով մյուս ցեղերի վրա, իր անունը հաղորդել է նրանց։

Երբ հայանի դարձան խեթական տեքստերը, հետազոտողներն ուշադրություն դարձրին այն բանի վրա, որ մ. թ. ա. XIV դարի տեքստերում հյուսիս-արևմտյան Հայաստանի ժարդերը կոչվում են Հայասա։ Մի շարք գիտնականներ, մեկը մյուսից անկախ, այն ենթադրությունն արին, թե հայ ցեղային տերմինը կապված է երկրի հին-խեթական այդ անվան հետ։

Հայ գիտական գրականության մեջ այդ հարցը մանրամասն քննարկել է Ա. Խաչատրյանը։ Բայց և այնպես շատ բան մնացել է չպարզված. դժվար էր բացատրել, թե Հայասա տերմինը, որ միայն խեթական հին տեքստերում է հանդիպում, ինչու է մտել հայերեն լեզվի մեջ։

Պաուլ Կրետշմերը, որ զբաղվել է Առաջավոր Ասիայի լեզվաբանությամբ և էթնոկենեզիսով, Հայասա տերմինը կապել է հյուսիս-արևմտյան Հայաստանի ցեղերի անունների՝ խոյերի կամ խայերի հետ, ենթադրելով, որ դրանք հայերի ցեղային տերմինի հետ մի գծի վրա են կանգնած։ Իսկապես այդ գիտությունն արժանի է լուրջ ուշադրության։

Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան մասի բնակության մասին չափազանց կարևոր տեղեկություններ է հաղորդում Քսենոֆոնը։ Նկարագրելով հույների նահանջի ճանապարհի վերջին էտապը, նա պատմում է, որ Փասիս կոչված գետն անցնելով՝ հույները մտան այն ժարդը, որտեղ ապրում էին տաոխների և խալիբների ցեղերը, և մոտեցան Արփա գետին։

Դիոդորը (XIV, 28) տաս հապար հույների նահանջի նույն այդ էտապը նկարագրելիս, ցեղերի անունները տալիս որոշ չափով տարակարծիք է Քսենոֆոնի հետ։ Ըստ նրա տեղեկությունների, հույները Փասիսն անցնելուց հետո ընկան խայերի և փասիակների ժարդը, իսկ հետո խալայների ժարդով անցան դեպի Արփայ գետը։ Քսենոֆոնի հիշատակած տաոխների փոխարեն Դիոդորը հիշում է խայերին և փասիակներին, իսկ խալիբների փոխարեն՝ խալայների մարդը։

Դեռ վաղուց արդեն ապացուցված է խալիբների և խալայների հաժանությունը։ Այս մասին գրել է գեներալ Ատրաբոնը, իսկ Ն. Յա. Մարը համոզիչ կերպով բացատրել է, որ այդ ժողովուրդների ցեղային տերմինի հիմքը եղել է ոչ թե խալդ, այլ խալ։

Իսկ Դիոդորը, կարծես, ժամանչում է տաոխների և խայերի կապը։ Ինչպես նշվեց արդեն վերը, տաոխների մարդը, հայկական Տայք և վրացական Տաո ժարդերը գտնվել են Ուրարտուի կազմի մեջ մտնող խոշորագույն երկրներից մեկի, այն է՝ ուրարտական սեպագրերում հիշվող Դիաուեխի երկրի և ասորական աղբյուրների Դայաենի երկրի տեղում։ Դիոդորի մատնանշումը տաոխների՝ հին դիաուեխների և հայերի միջև եղած կապի առթիվ մեզ հաժար էական հետաքրքրություն է ներկայացնում. այդ կապը վաղուց է զգացվել, և բազմիցս փորձեր են արվել հայ-ք տերմինը տայ-ք մարդի անվան հետ կապելու ուղղությամբ։

Այսպիսով, հայ ժողովրդի կազմավորման մեջ բացառիկ նշանակություն են ունեցել ցեղերի երկու միություններ, մեկը Հայկական բարձրավանդակի հարավ-արևմուտքում, Արմինա միությունը (Արևելյան Հայաստան), մյուսը՝ հյուսիս-արևմուտքում՝ Հայկական միությունը (Արևմտյան

Հայաստան)։ Այդ միությունների ասիմիլյացիայի և Արմինայի թուլացման հետևանքով, որ տեղի է ունեցել որոշակի և մեզ լավ հայտնի պատճառներով, իսկական միությունն առաջնությունն է ստանում Հայկական բարձրավանդակի ամբողջ արևմտյան մասում։ Դրանով էլ պետք է բացատրել այն փաստը, որ այս ժողովուրդը, որին հարևանները հին հիշողությամբ, հարավ-արևմտյան միության երկրի անունով, շարունակում էին Արմինա, Արմենիա անվանել,—սկսեց ինքն իրեն անվանել հայեր։

Այժմ մենք պետք է քննենք մի հարց ինչու անտիկ տրադիցիան, որին մի ժամանակ հետևում էր արևմտաեվրոպական գիտությունը, բոլորովին այլ կերպ է լուսաբանում հայերի ծագումը, նրանց համարելով արևմուտքից եկվորներ։ Այս հարցը սերտորեն կապված է անտիկ աշխարհի գաղութային իդեոլոգիայի և դեպի աշխարհագրությունն ու էթնոգրաֆիան ցույց տրվող յուրահատուկ վերաբերմունքի հետ, որ արտահայտում է գրողների անհատական տեսակետը։ Այսպես, առանձին արտաքին հատկանիշների, երբեմն հենց նույն հատկանիշների հիման վրա անտիկ գրողները հայերին մերձեցրել են մերթ փոյուգացիների, մերթ թեսալիացիների հետ։

Հին աշխարհի գրականության մեջ երկրների անունները հաճախ կապվում են ժողովրդի առասպելական նախահոր անվան հետ։ Սարգսյանը բերում է մի պատմություն, որի համաձայն հայերի նախահայրը եղել է թեսալիացի Արմենը—Յասոնի ուղեկիցը Կոլխիդա ճանապարհվելիս։ Անշուշտ այս պատմությունը որոշ ազդեցություն է ունեցել հայերի հայրենիքը Փոքր Ասիայի արևմտյան մասերում կամ նույնիսկ Բալկաններում որոնելու համար։ Այս դեպքում բոլորովին հաշվի չի առնվել, որ հայերի նախահոր, թեսալիացի Արմենի մասին պատմածը իր մեջ թաքցնում է տնտեսական աշխարհի գաղութային իդեոլոգիան, որ նա արտացոլում է Հունաստանի և Փոքր Ասիայի առանձին մարդերի՝ դրանով իրենց գաղութային առաջնությունն տարածելու ձգտումը։ Չէ՞ որ դրա հետ է կապված և այն, որ Անտիպատրոսը Հոոդոսի վերաբերյալ իր աշխատության մեջ Արմենին հոոդոսցի է համարել։

Անտիկ գրողների կարծիքով՝ միդիացիների և պարսիկների նախահայրերը ևս Հունաստանից են գուրս եկել։ Այս միանգամայն բնական է, թեև ակնհայտ սխալ է։

Հայ հին գրականության մեջ մենք հանդիպում ենք, բնականաբար, մի բոլորովին այլ բացատրության, թեև այդ ևս կառուցված է երկրի ու ժողովրդի անվան և նրանց նախահայրերի անվան նույնացման վրա։ Մովսես Խորենացին Հայաստանի Էպոնիմ է անվանում Արամին, նրան համարելով բիբլիական առասպելական նախահայր Հարեթի անմիջական հաջորդ։ Իր առաջին գրքի 12-րդ գլխում Խորենացին գրել է. «Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել հարավական մարտերում և Հայաստանի սահմաններն ընդարձակել է բոլոր կողմերից. սրա անունով էլ բոլոր ազգերը՝ ինչպես հույները, մեր աշխարհը կոչում են Արմեն, պարսիկները և ասորիները՝ Արմենիկ»։

Այս հաղորդման մեջ ևս մանրամասն կանգ չեմ առնի Հայոց պատմության այն գլուխների վրա, որտեղ խոսվում է հայերի հնագույն նախնիների մասին, կասեմ միայն, որ ես համակարծիք եմ այն հետազոտող-

ների հետ, որոնք գտնում են, թե Արմենակն ավելի շատ հիմքեր ունի, քան Արամը, Հայաստանի էպոնիմ (անվանատու) համարվելու, կարծես այդ է մատնանշում նաև Սեբեոսի Պատմությանը վերագրված անոնիմը և Ներսես Շնորհալին։ Ես անվիճելի եմ համարում այն դրույթը, որ Խորենացին, կամ նրա աղբյուրը, Պատմության մեջ է մտցրել լեգենդների ու գրույցների տարբեր, ինքնուրույն ցիկլեր, ինչպես Հայկի և նրա որդու՝ Արմենակի, Արամի, Շամիրամի և Արա Գեղեցկի գրույցները։ Եվ շատ հավանական է, որ Հայկի որդի Արմենակը, որի վերաբերյալ պատմությունը միացված է նրա հոր մասին եղած գրույցին, նույնպիսի առասպելական անձնավորություն լինի, ինչպես և Արամը, թեև նրա անվան հետ են կապել նաև ուրիշ դեպքեր։ Չի կարելի մոռանալ, որ Խորենացու ժամանակներում առաջնությունը Հայկին էր պատկանում։

Պետք է առանձնապես ընդգծել, որ հայերի նախահայրերի վերաբերյալ բոլոր գրույցները, որ բերում է Խորենացին, կապված են Հայկական բարձրավանդակի հետ և արտայոլում են Հայկական բարձրավանդակի հարավային մասում ապրած ժողովուրդների իսկական պայքարը ասորեստանցիների (Նինոսի), բաբելացիների (Բելի) և միդիացիների դեմ։ Եվ բոլորովին, ոչ մի բոպե, չի կարելի համաձայնել Դ. Խալաթյանցի հետ, որը պնդում էր, թե «հայերի պատկերացումն իրենց անցյալի մասին պետք է արտահայտվեր պարթևական ոգով, ունենար համենայն դեպս իրանական բնույթ»։[1] Այդ պնդումի մեջ արտահայտված է իրական պատմության իսպառ անտեսումը, և պատահական չէ, որ իր գրքում Դ. Խալաթյանցը հրաժարվել է ուրարտական նյութերն օգտագործելուց, պատճառաբանելով նրանց անբավարար ուսումնասիրվածությունը։

Հայաստանի հնագույն պատմությունը, հատկապես մեր քննարկած շրջանում, կապված չի եղել Իրանի հետ, այդ պատմությունն անքաժան է եղել Ասորեստանից, Փոքր Ասիայի երկրներից և այն երկրներից, որոնք կազմվել են Միտանյան թագավորության հիմքի վրա։

Հայաստանը աշխարհագրականնպատակավոր դիրք էր գրավում՝ գտնվելով Առաջավոր Ասիայի հաղորդակցության ճանապարհների խաչահատման տեղում։

Բիբլիայում Հայաստանը Թոգարմա անունով է կոչված, որի երկրորդ մասը, հավանորեն, պարունակում է ցեղական Արմա անունը։ Եզեկիելի մարգարեության մեջ «տունն Թոգարմա—Թորգոմա» հիշատակվում է Գոմերի (կիմմերների) հետ։ Բիբլիական Թոգարմա տերմինը, որ վերաբերում է մերձևիրատյան մարդին, հետագայում պահպանվել է Թորգոմ ձևով։ Այդպես են անվանել Հայաստանը նրա արևմտյան հարևանները, մասնավորապես սիրիացիները։

Վաղ շրջանի հայ պատմագիրները ևս գործ են ածում «տունն Թորգոմա» կամ «երկիր Թորգոմա» տերմինները, երբեմն պարզաբանելով, որ դա Հայաստանն է (Փավստոս Բյուզանդ, Ագաթանգեղոս)։

Մովսես Խորենացին հայերի նախահայրերից մեկին, Հայկի հորը Թորգոմ է անվանում։ Մի դեպքում այս էպոնիմը փոխարինված է մի ուրիշ՝ Թակլաղ անունով, որ Ք. Պատկանյանը համեմատել է Տիգրիս գետի անվան

[1] Г. Халатьянц, Армянский эпос в Истории Моисея Хоренского, стр 112.

[2] К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, 1881, стр. 84.

հետ։ Հայ նախնիքների ծննդարանության մեջ որպես Հարեթի որդի հանդես է գալիս Ռոմերը, Կապադովկիայի Դամիրքի Էպոնիմը, կապված կիմմերների ցեղային տերմինի հետ։

Ուսված նյութերը, կարծես, հաստատում են մեր այն ենթադրությունը, որ Հայաստանի սկզբնական կորիզը եղել է Արմե-ն (Արմինի), Ուրարտուի հարավ-արևմտյան մասի երկրներից մեկը։ Վանի թագավորությունը թուլանալիս, VII դ. վերջերին, առաջին հերթին անջատվեցին արևմտյան և հարավ-արևմտյան մասի մանր երկրները, որոնք մինչև այդ մշտական սպառնալիքի տակ էին գտնվում Ասորեստանի և Փոքր Ասիայի արևելյան մասի երկրների կողմից։ Առաջին փտանքը վերացավ, իսկ երկրորդը դեռ ոհալ ընույթ էր կրում։ Այդ պատճառով էլ մինչև այդ Ուրարտուի մասը կազմող և պետական բանակով պաշտպանվող երկրները այժմ ստիպված եղան համախմբվել, մեկ միություն կազմել իրենց ինքնուրույնությունը պահպանելու համար։ Նույն միությունը մոտավորապես այն տերիտորիան էր գրավում, որը մոտ հինգ հարյուր տարի առաջ Նաիրիի երկրներն էին գրավում։ Առաջավոր Ասիայի պատմության մեջ երկրորդ անգամ, բայց արդեն նոր հիմքի վրա, կազմվում է Հայկական բարձրավանդակի արևմտյան մասի երկրների միությունը։ Հավանորեն այդ միության գլուխ կանգնեց Արմե (Արմինի) երկիրը, ուստի հարևան ժողովուրդներն սկսեցին Հայկական բարձրավանդակի արևմտյան մասն անվանել Արմինա, մինչդեռ բաբելացիները շարունակում էին նրան հին տերմինով Ուրարտու անվանել։ Նրանց տեսակետով այնտեղ էական ոչինչ չէր կատարվել։ Նոր ցեղերի ներխուժում չէր եղել, երկրները նույնն էին մնացել։ Եթե մենք ճիշտ ենք հասկանում, թե արմենները առաջ մտնում էին Ուրարտուի կազմի մեջ, ապա պատմարանների առաջ ակամա այն հարցն է ծագում, թե ինչու միջնադարյան հայ պատմագիրները ոչ մի տեղեկություն չեն հաղորդում Ուրարտուի մասին։ Առաջ կարծվում էր, որ արմենների և ուրարտացիների հարաբերությունների մասին պատմում է Կյուրոպեդիումը, բայց այժմ միանգամայն ակնհայտ է, որ խալդայները, որոնց մասին պատմում է Քսենոֆոնը, ոչ մի առնչություն չունեն ուրարտացիների հետ։ Նախկին այն կարծիքը, թե ուրարտացիներն իրենց խալդեր են անվանել, թյուրիմացություն է, ծագած ուրարտական աղբյուրների սխալ հասկանալուց։ Այդ արդեն մանրամասն բացատրված է, և այժմ հարկ չկա դրա վրա կանգ առնելու։

Մյուս կողմից, Մորենացին ևս, կարծես, Ուրարտուն (բիբլիական Արարատ երկիրը) նույնացնում է Հայաստանի հետ։ Վամենալով ցույց տալ, որ Հայաստանը իրոք գոյություն է ունեցել միդիացիների ասպարեզ գալու շրջանում, նա գրել է. «որ այդ ժամանակ մեր ազգը թագավորություն ուներ, այդ մասին վկայում է Երեմիա մարգարեն, որ պատերազմի կոչ անելով Բաբելոնի դեմ, ասում է. Հրաման տուր Այրարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին։ և այս հաստատում է, որ մենք այն ժամանակ թագավորություն ենք ունեցել»։

[1] И. И. Мещанинов, Древневанский бог халд-халдин, Восточные записки, 1927, стр. 173; J. Friedrich, Chalder oder Urartaer, Zeitschrift der Deutsch. Morgenlandischen Gesellschaft, XC, 1936, стр. 60; Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, 1940, էջ 18 և 32; Б. Б. Пиотровский, История и культура Урарту, 1944, стр. 325.

Ինձ թվում է, որ իրերի այդ կացությունը նրանով կարելի է բացատրել, որ արմենական և հայկական ցեղերի նոր միություններ կազմվելն առաջ է եկել ոչ թե պերտուրբացիայի, ոչ թե նվաճելու հետևանքով, այլ Վանի թագավորության տրոհման, նրա ծայրերկրների անջատման հետևանքով։ Արմենները և հայերը ուրարտացիների դեմ պատերազմներ չեն մղել այնպես, ինչպես որ ուրարտացիները չէին կարող հակադրել ցեղերի նոր միության կազմավորմանը։ Վանի միությունը շարունակում էր գոյություն ունենալ, սակայն զգալիորեն փոքրացած սահմաններում։ Դեռ Հերոդոտը նշում է ալարոդներին, այսինքն՝ ուրարտացիներին, որոնք ապրում էին Վանա լճի շրջանում և մտնում էին պարսկական պետության սատրապության մեջ։

Ոմանք այն հնթադրությունն են արել, թե Ուրարտուն դադարել է գոյություն ունենալուց 609 թվականից, բաբելական Նարուպալասար թագավորի արշավանքից հետո։ Սակայն այդ, ըստ երևույթին, այդպես չէ։ Երեմիայի մարգարեության մեջ Հեսուի որդի Հովակիմի թագավորության չորրորդ տարուն վերաբերող մասում, այսինքն 605 թ., Բաբելոնի դեմ կռվելու կոչ է արվում ուրարտացիներին (Այրարատ), մանայեցիներին և սկյութացիներին։ Երեմիայի մարգարեության հայերեն թարգմանության մեջ այդ հատվածում մանայեցիների անունը բաց է թողած։ Նույն ձևով էլ մեջ է բերել այդ ցիտատը Մովսես Խորենացին։

Ինձ ավելի հավատի է թվում Վանի թագավորության կործանման թվականը VI դ. սկզբան ընդունելը, երբ նա ջախջախվեց հարավ-արևելքից հարձակվող միդիացիների և Անդրկովկասի ցեղերի՝ հյուսիսից սկյութացիների հետ միասին առաջացող մատիենների և սասպիրների կողմից։ Հենց այդ ժամանակ էլ, ըստ հնագիտական տվյալների, տեղի է ունեցել հարավային Անդրկովկասի ուրարտական կուսակալի նստավայրի՝ Կարմիր բլուրի բերդի ավերումը։

Միդիացիները մ. թ. ա. VI դ. սկզբին գրավելով Ուրարտուի կենտրոնական մասը, շատ երկար ժամանակ պահում էին իրենց ձեռքում, և Ստրաբոնն ասում է, որ Բասորոպեդան (Վասպուրականը) Հայաստանին միացվեց միայն Արտաքսիաի (Արտաշեսի) և Զարիադրեսի (Զարեհի) ժամանակ, այսինքն՝ մ. թ. ա. II դարի առաջին կեսին։ Իսկ 400 թվականի մոտերքը, տաս հազար հույների նահանջի ժամանակ՝ Հայաստանի վրայով, նրա հարավ-արևելյան սահմանն էր Կենտրիտ (Բոհտան) գետը, իսկ արևմտյան սահմանը՝ Եփրատ գետը, որից այն կողմը Կիլիկիան էր։[1]

Որ Հայաստանը միդիական շրջանում մեկ միասնական պետություն չէր, այլ կազմված էր մանր երկրներից, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր կառավարողը, այդ երևում է նաև Սիդիայի (Մարաստանի) ժամանակակից հայ թագավորների ցուցակից, որ բերում է Մովսես Խորենացին։

Այսպես, Կիաքսարի ժամանակակից Պարույրի և Աստիակի (Աժդահակի) ժամանակակից Տիգրանի միջև կա ևս յոթ թագավոր։ Ըստ երևույթին դրանք մասամբ եղել են Հայաստանի առանձին երկրների միաժամանակ իշխող թագավորներ, որոնց պատմագիրը, կոմպիլյատորի սովորությամբ, արհեստական կերպով հաջորդականության մի դի վրա է դրել։ Այս եղրակացությանը կարելի է հանգել, ինչպես ինձ թվում է, նույնիսկ առանց ժանրագնին քննության։

[1] Я. А. Манандян, О торговле и городах Армении, 1930, стр. 9.

Խորենացին Պարույրի հաջորդ է անվանում Հրաչյային և պատմում է, որ Նրա օրով Նաբուզոդոնոսորը կործանեց Երուսաղեմը (597 թ.) և որ Հրաչյան Նաբուզոդոնոսորից ստացավ անվանի հրեաներից մեկին, Շարաթ անունով, որից առաջացավ Տիգրատունիների տոհմը։

Հաջորդ թագավորը Խորենացու ցուցակում Փառնավազն է, բայց պատմագիրը Նրա մասին մեզ ոչ մի տեղեկություն չի հաղորդում։ Հայ թագավորի այդ անունը մենք գտնում ենք նաև այն անոնիմի մեջ, որ վերագրվել է Սեբեոսին։

Այնտեղ Փառնավազը նշված է որպես Նաբուզոդոնոսորի ժամանակակից, որը և զրկեց Նրան ինքնուրույնությունից։ Սակայն այստեղ անոնիմի Փառնավազը նշանակված է թագավորների այն ցուցակի մեջ, որը տարբերվում է Խորենացու 22-րդ գլխում բերված ցուցակից։ Խորենացին Նրա հաջորդներ է անվանում Զարեհին և Արմոգին, որոնց Նա բերում է մի այլ 31-րդ գլխում, այն ցուցակում, ուր Նախահայրը Տիգրանի որդի Վահանն է։ Այս, ինչպես ինձ թվում է, մի ավելորդ ապացույց է, որ Խորենացին միացրել է Հայաստանի թագավորների, տարբեր ժարդերի թագավորների մի քանի ցուցակները։

Դրված պրոբլեմը վերջնականապես լուծելու հավակնությունից բոլորովին հեռու և ավելի շուտ այդ պրոբլեմը դնելու նպատակը հետապնդող իմ այս զեկուցման խնդիրն է ցույց տալ, թե ինչ պայմաններում կործանվեցին հին Արևելքի երբեմնի հզորագույն, իրենցից հետո անժիջական էթնիկական հաջորդներ չթողած պետությունները, և ինչպես նոր շրջանում կազմավորվեցին Առաջավոր Ասիայի մինչև մեր օրերը հասած նոր ժողովուրդները։

Իմ գլխավոր ուշադրությունը ես դարձրի Ուրարտուի հարավ-արևմտյան մասի, մասնավորապես Արմե (Արմինի) երկրի անջատվելու և ինքնուրույնություն ձեռք բերելու պրոցեսի վրա, ցույց տալով միաժամանակ, թե ինչպես Արմի երկիրը դարձավ ցեղերի այն նոր միության կորիզը, որն ընդունեց նրա անունը և այն փոխանցեց կազմավորվող ժողովրդին։ Արմե (Արմինի) երկրի՝ Վանի թագավորությունից անջատվելու մասին, իմ կարծիքով, պատմում է նաև Մովսես Խորենացին իր աշխատության այն մասում, որն առաջ պատմական հավաստիականությունից զուրկ էր համարվում։

Ինչպես ասվեց արդեն վերևում, Մովսես Խորենացու I գրքի մեր քննարկած 21-րդ գլխում այնպիսի մանրամասնություններ են բերվում, որ Նա ինքը երբեք չէր կարող հերյուրել և արհեստական կերպով հարմարեցնել Ասորեստանի կործանման մոմենտին, և որոնք համընկնում են Նաբուզոդոնոսորի բաբելական ժամանակագրության տվյալներին, որը հայտնի է դարձել միայն 1923 թվականից հետո։

Հաժաձայն Խորենացու Պատմության, Հայաստանը կամ ինչպես Նա է ասում՝ «մեր երկիրը», որը ես կապում եմ սեպագրերի մեջ հիշատակված, Ասորեստանի սահմանների մոտ գտնվող և Ուրարտուի թագավորության մեջ մտնող Արմինի երկրի հետ, մ. թ. ա. 613—612 թ. թ. սգնություն է ցույց տվել Միկիային և Իարելոնին Ասորեստանի դեմ մղած նրանց պայքարում։ Այդ երկիրը եղել է Նրանց շարքում, որոնց բաբելական ժամանակագրությունն անվանում է վաչկատուններ, «մանդայան ռազմիկներ»։ Այս

տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայկական հնագույն Մանդակունի տոհմը, որի կալվածները հենց Վանա լճից արևմուտք, Ռասունից հյուսիս էին գտնվում։ 612 թվականին Միդիային և Բարիլոնին ցույց տված այդ օգնության համար էլ հենց Արմինին ինքնուրույնություն է տացել։ Այսպիսով, հայկական թագավորության սկզբնական կորիզը եղել է այն շրջանում, որտեղ Տիգրան Մեծը շինել է իր մայրաքաղաքը, և որտեղ, ըստ Ապպիանոսի, նա թաղ է դրել իր դլխին, ինչպես և առաջին թագավորը, որի մասին պատմական ավանդություններ են միայն պահպանվել։

Հայոց առաջին թագավորին Խորենացին անվանում է Սկայորդու որդի Պարույր, և հավանորեն այդ անունները նա վերցրել է իր ժամանակ ժողովրդի մեջ պահպանված պատմություններից ու լեգենդներից։ Մ. Իժինը Պարույր անվան մեջ տեսնում է պար բառի հիմքը, որ նշանակում է «շրջան», «շուրջպար», իսկ սեմանտիկորեն՝ նաև «արև», որին միացած է հայերեն ույր վերջածանցը։

Արմինի երկրի դլխավորած երկրների միությունը երկար դոյություն չունեցավ։ Նրա տերիտորիան անցնում էր մեկ պետությունից մյուսին, Բարիլոնից Միդիային, Միդիայից Պարսկաստանին։ Սակայն, չնայած իրենց դարն ապրած հին-արևելյան տիպի պետությունների կողմից գործադրված այդ բռնություններին, ցեղերի նոր միության ներսում ինտենսիվ զարդացում էր տեղի ունենում, ստեղծվում էին նախապրյալներ ու պայմաններ հին-արևելյան տիպի պետություններին փոխարինելու եկած նոր տիպի պետությունների կազմավորման համար, որոնց հիմքն արդեն ոչ թե առանձին ցեղերի ու ժողովուրդների կոնգլոմերատն է, այլ ժողովուրդը։

Եթե մենք գիտենք Արմինա ցեղերի միության ներսում կատարված պրոցեսը, ապա կտեսնենք նրա կորիզի աստիճանական աճումը ոչ թե զավթումների, ներխուժումների, այլ մի երկիրը մյուսի հետ ասիմիլացիայի ենթարկվելու—միաձուլվելու միջոցով։ Բարբերություն հին Արևելքի հին պետություններից, նոր միությունն ընդհանուր լեզու է ստեղծում։ Խորենացին, նկարագրելով Արամի քաղաքությունները, պատմում է, որ Արամը հպատակ երկրների բնակիչներին հրամայում էր հայերեն լեզուն սովորել, իսկ Սարարոնը, թվելով Արտաքսիասի (Արտաշեսի) և Զարիադրեսի ձեռքով Հայաստանին միացված երկրները, եզրակացնում է—«Եվ այժմ ամենքը մեկ լեզվով են խոսում»։

Հայերի տարագրությունը ես չեմ պատկերացնում որպես առանձին ցեղերի դաղթ, որպես բնակության վայրի փոփոխություն, այլ որպես կազմավորվող ժողովրդի աճում, նրա միաձուլում նույն միության կազմի մեջ մտնող մյուս երկրների բնակչության հետ։ Ուստի իրավացի են այն հետազոտողները, որոնք հայերին թաուր ժողովուրդ են համարում թե մարդաբանական և թե լեզվական հատկանիշներով։

Այսպիսով, հայ ժողովրդի ձևակերպումը՝ մոտավորապես հինգ դար տևող, այսինքն՝ մ. թ. ա. VII-ից մինչև II դարն ընդգրկող մի երկարատև պրոցես է։ Հայ ժողովրդի ձևակերպման այդ պրոցեսը տեղի է ունեցել Առաջավոր Ասիայի հողի վրա, որպես Հին Արևելքի պետությունների պատմական զարգացման արդյունք։

Մ. թ. ա. VI դարում Ուրարտուն բաժանվել է առանձին ժողովուրդների և ցեղերի՝ նրա կազմի մեջ մտնող երկրներին համապատասխանորեն։

Իրենք՝ ուրարտացիները չեն չքացել, նրանք չեն ընաջնջվել և ոչ մի տեղ չեն գաղթել, այլ շարունակել են ապրել թագավորության կենտրոնական մասի սահմաններում, Բիայնա երկրի սահմաններում, այսինքն՝ Վանա լճի շրջանում։ Հերոդոտը նրանց անվանում է ալարոդներ, այսինքն՝ ուրարտացի տերմինի հետ կապված անունով։ Ուրարտացիները առանձին ժողովուրդ են եղել և գլխավորում էին մի թագավորություն, որի մեջ չկար միասնական մի ժողովուրդ (народность)։ Նրանք համեմատաբար փոքրաթիվ էին և տեղեկություն դեպ քանակապես գերակշռող բնակչություն չէին Վանի թագավորության մեջ։ Այդ պատճառով էլ Ուրարտուի պետության քայքայումից հետո նրանք շարունակում էին ապրել որպես մի աննշան ժողովուրդ, չնայած որ նրանց կուլտուրան յուրացրել և զարգացնում էին մյուս ժողովուրդները։ Հետագայում ուրարտացիները ձուլվեցին հայերի հետ և մտան նրանց կազմի մեջ, բայց երբեք ոչ որպես որոշող մաս։ Մասնավորապես, նրանց լեզուն ևս, որպես նախկին պետական լեզու, չպահպանվեց և ազդեց լոկ հայ լեզվի վրա, մանավանդ Վանի բարբառի վրա, ինչպես այդ ցույց է տվել Ա. Ս. Ղարիբյանը։

Սխալ կլիներ կարծել, թե ես բոլորովին ժխտում եմ Հայկական բարձրավանդակի պատմության մեջ տեղի ունեցած առանձին գաղթերի և էթնիկական վերախմբավորումների առանձին փաստերը։ Անշուշտ դրանք եղել են, բայց նրանց նշանակությունը պետք է այլ կերպ գնահատել, քան առաջ էր կատարվում։

Կուլտուրայի պատմության հնացած գիտությունը սովորաբար զարգացումը բացատրում էր արտաքին պատճառի՝ գաղթի (միգրացիայի) միջոցով։ Եվ այժմ էլ դեռ մենք երբեմն դժվարությամբ ենք հրաժարվում նախահայրենիքի, օջախների, կուլտուրաների, գաղթերի այդ հնամաշ թեորիայից, չնայած որ հնագիտության և կուլտուրայի պատմության բնագավառում հրատարակված վերջին աշխատություններն ակնառու ձևով, փաստերի հիման վրա, ցույց են տալիս այն թեորիաների անանկությունը, որոնք իմանենտ զարգացումը կամ կուլտուրական փոխառությունը փոխարինում են գաղթով։ Հնդեվրոպական թեորիան թե լեզվաբանության և թե հնագիտության մեջ առանձնապես հաստատում է միգրացիայի, գաղթի տարցերում, հենվելով հին մեթոդոլոգիայի վրա, նրան խորթ է ստադիականության ուսմունքը, և նա նմանության այլ բացատրություն չի գտնում, բացի ցեղերի ու ժողովուրդների գաղթերով բացատրելուց։ Հայերի Առաջավոր Ասիա գալու հարցը գլխավորապես հենվել է լեզվաբանական տվյալների, հայ լեզվում եղած հնդեվրոպական տարրերի վրա, որոնք երբեք էլ գերակշռող չեն եղել, ինչպես այդ ցույց է տվել դեռ Մարկվարտը, որը լիովին հավատում էր հայերի Եվրոպայից գաղթելուն, և որոնք կարող են բացատրվել նաև առանց մի ամբողջ ժողովրդի գաղթը պատկերացնելու օգնության, ինչպես այդ ապացուցել է Ն. Յա. Մառը։ Այս հարցի վրա ես ավելի երկար կանգ չեմ առնի, որովհետև հայ լեզվի ծագման թեմային ր. Ա. Լափանցյանը նվիրել է հատուկ աշխատություն։

Մի քանի խոսք կասեմ միայն հնդեվրոպական թեորիայի մասին, որպեսզի հասկանալի լինի, թե ինչու է հայերի Եվրոպայից գաղթելու պատկերացումն այդպես արժատավորվել հին պատմագիտության մեջ։

Հնդեվրոպական թեորիան ծագել է XIX դարի սկզբներին, այն ժամա-

նակ, երբ գիտությունը Արևմտյան Եվրոպայի կուլտուրան խստորեն հակադրում էր Արևելքի կուլտուրային, դրանք երկու մեկուսացված աշխարհներ համարելով։ Հին Արևելքի բնագավառում կատարված հնագիտական էկզոտիկ հայտնագործությունները և չինական կուլտուրայի հետ ծանոթացումը միայն խորացնում էին այդ հակադրությունը։ Դեռ XVIII դարի վերջերից Եվրոպայի գիտական աշխարհը ուշադրություն դարձրեց Առաջավոր Արևելքի երկրների վրա, և ահա արևելագետների համար բացվեց մի նոր աշխարհ, մի ամբողջ շարք լեզուներ Եվրոպայից մինչև Չինաստան ընկած տարածության վրա։ Այդ լեզուներն ուսումնասիրելիս կատարվեց մի գյուտ, որը գլխիվայր դրեց Արևելքի լեզուներին վերաբերող նախկին պատկերացումը. արևելյան լեզուներից քաջ հայտնի էին, գուցե միջնադարից՝ հին եբրայեցերենն ու արաբերենը։ Բոլորովին անսպասելի կերպով հայտնաբերվեց մի քանի ասիական լեզուների՝ Իրանի և Հնդկաստանի լեզուների նմանությունը եվրոպական լեզուների հետ, և հատկապես հնագույն լեզուներից մեկի՝ սանսկրիտերենի նմանությունը։ Այս անսպասելի հայտնագործությունը, որը, կարելի է ասել, հանկարծակիի բերեց արևմտա-եվրոպական լեզվագիտությունը, բացատրվեց Առաջավոր Ասիայի և Եվրոպայի մի քանի ժողովուրդների ընդհանուր ծագումով, նրանց մեկ ասիայի պատկանելով։ Այդպիսի բացատրությունն ամբողջովին համապատասխանում էր լեզվի գիտության նորմաներին XVIII դարում և XIX դ. սկզբին։ Որովհետև լեզուների նմանություն նկատվում էր Հնդկաստանից մինչև Եվրոպա ընկած տերիտորիայում ապրող ժողովուրդների մոտ, ուստի նրանք, երկու հեռավոր ծայրամարգերին համապատասխանորեն, սկսեցին կոչվել «Հնդեվրոպացիներ»։ Այս տերմինը լայն չափերով ընդհանրացավ գիտության մեջ, սակայն նրա հետ միաժամանակ գործ էր ածվում նաև մի այլ տերմին, այն է՝ «Հնդագերմանացիներ» տերմինը, որը գերմանացի խոշորագույն եբրայագետ Ֆեգենիուսի աշխատություններից հետո լայն չափերով տարածվեց և ապրեց մինչև մեր օրերը՝ շովինիստական երանգի ուժեղացումով։ Արևմտաեվրոպական լեզվագիտության մեջ խորը արմատացավ այն տեսակետը, որը Եվրոպայի լեզուների նմանությունը Ասիայի մի քանի լեզուների հետ բացատրում էր նրանց ընդհանուր ծագումով հնդեվրոպացիների հեռավոր նախահայրերի մեկ լեզվից, որոնք այդ հեռավոր շրջանում կոչվում էին միևնույն ընդհանուր կուլտուրան ունեցող մեկ միասնական ժողովուրդ։ Ընդհանրության այդ շրջանը, որ կոչվում էր «արիական միասնության շրջան», կապվում էր խիստ հեռավոր ժամանակի հետ, ենթադրաբար մ. թ. ավելի քան երեք հազար տարի առաջ։ Այսպիսով, «Հնդեվրոպացիներ» և «Հնդագերմանացիներ» տերմիններն էթնիկական նշանակություն ստացան և հաստատապես արմատավորվեցին կուլտուրայի պատմության և հնագիտության մեջ։ Հնդեվրոպացիների նախահայրերի հարցում սկզբում իշխում էր ասիական տեսակետը, որովհետև հենց այնտեղ, Արևելքում նրբվեցին ամենահին հնդեվրոպական լեզուները, սակայն հետո արտահայտվեց հնդեվրոպացիների եվրոպական նախահայրերի հիպոթեզը, որը պաշտպանում էին մի ամբողջ շարք լեզվագետներ ու հնագետներ։ Նացիոնալիստորեն տրամադրված գերմանական գիտությունը հնդագերմանացիների հայրենիքը համարում էր Սկանդինավիան և Հյուսիսային Գերմանիան։

Գիտության զարգացումը և հնագույն կուլտուրաների հնագիտական

հայտնագործությունները նյութ չէին տալիս հնդեվրոպական թեորիայի հիմնական դրույթները պնդելու համար։ Ընդհակառակը, որքան ավելի շատ էր խորանում հնագիտությունը դարերի մեջ, այնքան ավելի քիչ էր նկատվում կուլտուրաների ընդհանրությունը և այնքան ավելի շոշափելիորեն էր երևան գալիս հին ցեղերի անջատվածությունը։ Հնդեվրոպացիների նախահայրենիքը չէր գտնվում, իսկ «արիական միասնության շրջանը» առանց հետանկարի անցնում էր ժամանակի խորքերը։ Այդպիսի կացությունը, բնականաբար, հոռետեսություն էր առաջացնում, իսկ ոմանք երկյուղ էին հայտնում, որ հնդեվրոպացիների նախահայրերի և նրանց սարապաղթի ուղիների հարցը կարող է չլուծված մնալ, որովհետև հաղիվ թե դիտությունը հաջողվի երբևիցե թափանցել ամենահեռավոր էպոխաների պղտոիքների մեջ։ Դրա հետևանքով հնդեվրոպական թեորիայի հիմնական դրույթները դադարեցին լեզվաբանների ու հնագետների գիտական հետաքրքրության առարկա ծառայել, այդ դրույթները թեորիայի հիմք էին ընդունում լոկ հավատալով, որպես դոգմատիկ կարգի դրույթներ, որոնք լիովին համապատասխանում էին XIX դարի սկզբի պատմական գիտության պատկերացումներին։ Երբ արդյունքն այն եղավ, որ լեզվագիտությունն ու հնագիտությունն սկսեցին ետ մնալ, պրոբլեմներն ուսումնասիրվեցին ընդհանուր կառուցվածքներից ու գիտական լայն ընդհանրացումներից դուրս, ընդհանուր դրույթներն սկսեցին կորվել կոնկրետ նյութի ուսումնասիրությունից, որը զլխավորապես ֆորմալ մեթոդով էր կատարվում։

Հնդակերմանական հնագիտությունը հետաքրքրվում էր նաև Կովկասով։ Վաղուց արդեն գոյություն ուներ այն տեսակետը, որի համաձայն մետալագործությունը Կովկաս էր բերվել արդեն բոլորովին պատրաստ ձևով, բրոնզից երկաթի փոխանցման փուլում։ Այն ժամանակ, XIX դարի երկրորդ կեսին, Կովկասում հայտնի էր միայն կոբանական հին կուլտուրան Օսեթիայում, որի համեմատ էլ դատում էին Կովկասի և Անդրկովկասի ամբողջ մետաղագործական կուլտուրայի մասին։ Հնդեվրոպաբանության սկզբունքների համաձայն՝ զանազան տեսակետներ էին արտահայտվում կովկասյան մետաղագործության ծագման առթիվ—հարավ-արևմտյան կամ Գենտրոնական Ասիայից, Առաջավոր Ասիայից, Հնդկաստանից և նույնիսկ Չինաստանից։ XIX դարի վերջերին գերմանական հնագիտական դրականությունը նշեց Կովկասի մետաղյա իրերի մոտիկությունը արևմտա-եվրոպականի հետ, որով որոշվեց միգրացիոն որոնումների մի նոր՝ այլ ընթացք։ Այս ուղղությամբ առանձին եռանդ ցուցաբերեցին հնագետ-հնդակերմանիստներ Կոսինան և Վիլկեն։ Բանուրյան մետաղագործությունը համարելով հին-կովկասյան, նրանք միգրացիոն ալիքն ուղղեցին արևմուտքից դեպի Կովկաս։ Նրանք գտնում էին, որ բրոնզե իրերը Կովկաս են բերել մերձդանուբյան երկրներից Սև ծովի հյուսիսային ափով անցած արիացիները։ Այդպիսով, գաղթերի ուղղությունը հեշտությամբ փոխվեց—ոչ թե Արևելքից էին եկել արիացիները, այլ Արևմուտքից։ Բայց հնդակերմանիստ գիտնականներն է՛լ ավելի հեռու գնացին. նրանք հայտարարեցին, որ օսեները, որոնց երկրում էր գտնվում կոբանական հին կուլտուրան, գերմանական ծագում ունեցող ժողովուրդ են։ Դրանք լոկ Հաքստհաուզենի և Հանի անհատական կարծիքները չէին, նրանց հարեցին ֆաշիստական Գերմանիայի մի ամբողջ շարք պատժարաններ։

Հնագույն մետաղագործության հնագիտական վերջին հայտնագործությունները Կովկասում և մասնավորապես մեզ մոտ, Հայաստանում, կործանեցին արևմտաեվրոպական գիտության այդ բոլոր անհող կառուցումները։ Հայտարերվեցին մետաղի յուրացման սկզբնական շրջանի, պղնձի դարի հուշարձաններ, որից հետո անդրկովկասյան մետաղագործության զարգացումը հանդես է գալիս որպես մի օրինաչափ պրոցես՝ կապված Կովկասի կուլտուրայի ընդհանուր զարգացման հետ, տեղական այդ պղնձահանքային շրջանների հետ։ Իսկ Հյուսիսային Կովկասում կատարված լեզվագիտական ու էթնոգրաֆիական աշխատանքները ցույց տվին, թե որքան ծիծաղաշարժ են գերմանական գիտնականների դրույթներն օսերի գերմանական ծագման մասին։

Եվ եթե մենք ուշադրությամբ քննենք հայերի եվրոպական ծագման և նրանց Առաջավոր Ասիա գաղթելու թեորիան, ապա առանց դժվարության կտեսնենք, որ այդ թեորիան հիմնված է, հնդագերմանիզմի սկզբունքների վրա։ Որ այդ իրոք այդպես է դրանում մեզ համոզում է Մարքվարտի՝ հայ ազգի ծագմանն ու վերականգնմանը նվիրված աշխատությունը։ Մարքվարտը հանգամանորեն և օբեկտիվորեն քննում է հայերենի և փռյուգական ու հնդեվրոպական լեզուների կապերի հարցերը, ի դեպ ասած, ոչ հոգուտ իր իսկ ընդհանուր տեսակետների, մանրամասնորեն կանգ է առնում հայերի և հեթիթների կապերի վրա, Փոքր Ասիան հատում է հայկական կուլտուրայի օջախը, որտեղից ուղղվել են միգրացիոն ալիքները, և ինչպես վայել է օբեկտիվ հնդեվրոպադետին, հայտարարում է, որ հայերի Եվրոպայից գալու հարցը մեր պատմական դիտելիքներից դուրս է գտնվում։ Այդ վկայում է, որ հայերի դրսից գալու մասին չկա ոչ մի տվյալ, որ հայերի նախաժողովրդի վերաբերյալ այդ դրույթը, որից չի հետևել և չէր էլ կարող հետևել որևէ հետք, լոկ հնդեվրոպական, ավելի ճիշտ՝ հնդագերմանական թեորիայի արդյունք է։ Հայերի Եվրոպայից դաղթած լինելու թեորիան ծնվել է Գերմանիայում, սակայն նա սխալ է ոչ իր ծագման վայրի տեսակետից։ Գերմանիան իր ժամանակին ստեղծել է մի ամբողջ շարք գիտական թեորիաներ, որ մենք բարձր ենք գնահատում և զարգացնում, բայց դրանց կողքին կան ռեակցիոն թեորիաներ, որոնք արգելակում են գիտությունը և այն դեպի հետ են քաշում։ Այդ թեորիաները հատկապես ուժեղացան XIX դարում, թեև իրենց էությամբ նրանք դարավոր վաղեմություն ունեն։

Մեր և հնդագերմանիզմի ուղիները տարբեր են, նույնիսկ ավելին, մեր խնդիրն է կանգնեցնել նրա շարժումը, մեր խնդիրն է կանգնեցնել այդ շարժումը հայագիտության մեջ, հայերի հնագույն պատմության ուսումնասիրությունը հնդեվրոպական ուղուց փոխադրել պատմական մատերիալիզմի ուղին։

Ինչու պետք է մենք հայերի ծագման հարցում հեռանանք հնդեվրոպական թեորիայից, որ հիմնավորված է հելլենական գաղութային իդեոլոգիայի վրա խարսխված անտիկ տրադիցիայի վրա, և անտեսենք տեղական տրադիցիան, որը հայերին համարել է Առաջավոր Ասիայի հիմնական բնակիչներ ընդունելը։

Եզրափակման մեջ պետք է քննենք և մեկ հարց։ Ինչպես կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Հայաստանը, երկար ժամանակ գտնվելով

Միդիայի, Պարսկաստանի և Ալեքսանդր Մակեդոնացու—Սելևկյան պետության իշխանության տակ, չկորցրեց իր ինքնուրույնությունը, այլ ընդհակառակը, անընդհատ զարգացման պրոցեսում ստեղծեց մի պետություն, որը փոխարինելու եկավ հին Արևելքի պետություններին։

Քննարկելով ավելի ուշ ձևի հարցերը, ազգային պետության հարցերը, ընկեր Ստալինը գրել է. «Մյուս կողմից, անկասկած է, որ Դյուրոսի կամ Ալեքսանդրի մեծ պետությունները չէին կարող ազգեր կոչվել, թեև նրանք պատմականորեն էին գոյացել, զանազան ցեղերից ու ռասաներից էին գոյացել։ Դրանք ոչ թե ազգեր էին, այլ այնպիսի խմբերի պատահական ու քիչ շաղկապված կոնգլոմերատներ, որոնք տրոհվում էին և միավորվում, նայած այս կամ այն նվաճողի հաջողություններին կամ պարտություններին»։[1] Այսպիսով, նրանց բնորոշ գիծն այն է, որ նրանք քիչ շաղկապված կոնգլոմերատներ էին։ Այդ պետություններում չկար ոչ լեզվի ընդհանրություն, ոչ անտեսական կյանքի ընդհանրություն։

Երբ մենք խոսում ենք հին Արևելքի պետությունների ժողովուրդների մասին, ապա «ժողովուրդ» (народность) պիտք է հասկանալ պայմանականորեն, և թերևս ավելի ճիշտ կլինի խոսել պետությունների կազմի մեջ մտնող առանձին ժողովուրդների ու ցեղերի մասին։

Այդ պատճառով էլ հին Արևելքի պետություններն իրենց քայքայումից հետո իրենց անմիջական հետնորդներ չեն թողել մեզ։

Միդիայի, Պարսկաստանի պետությունների և Ալեքսանդրի պետության մեջ մտնող առանձին երկրները ըստ էության թողնված էին իրենք իրենց, նրանցից պահանջվում էր լոկ ձևական հպատակություն, սահմանված հարկի ու տուրքի վճարում կենտրոնական իշխանությանը և ռազմական ու շինարարական պարհակների կատարում։ Այդ երկրների ընդերքում կարող էին ազատ զարգանալ այն ուժերը, որոնք ոչնչացրին հին Արևելքի այդ խոշոր պետություններին։

Ես կարծում եմ, որ այնպես, ինչպես ազգը որոշ էպոխայի, այսինքն՝ բարձրացող կապիտալիզմի էպոխայի պատմական կատեգորիա է, այնպես էլ ժողովուրդը որպես պետական հիմք, նույնպես պատմական կատեգորիա է, որ ծագում է հին-արևելյան տիպի պետության քայքայման հիմքի վրա։ Ուստի հայ և վրաց ժողովուրդների կազմավորումը մենք պետք է դիտենք պատմական որոշ իրադրության հետ կապակցված և՝ որպես Առաջավոր Ասիայի առանձին էթնիկական խմբերի որակական վերաձևավորման պրոցես։

Б. Б. Пиотровский

К вопросу о происхождении армянского народа

(Резюме)

Принято считать, что в истории Передней Азии армяне появились в начале VI в. до н. э. Полагают, что древнейшие о них сведения сохранили ахеменидские клинообразные надписи Дария. В трудах, посвященных истории Передней Азии и Кавказа, наиболее распространенной теорией происхождения армян считается теория, согласно которой армяне, двигаясь из западных областей Малой Азии, заняли

[1] *И. В. Сталин.* Марксизм и национальный вопрос, 1939, стр. 5.

Армянское нагорье и слившись с древними урартами, образовали новый народ—армян. В настоящей статье в противовес этой теории показывается, что армянский народ образовался на Армянском нагорье и не является пришлым. Прежнее представление о миграции армян было основано на устаревших в настоящее время положениях индоевропейской теории (в частности, индогерманизма) и не оправдывается материалами. При использовании сведений античных авторов не учитывалось то обстоятельство, что они отражают колонизаторскую идеологию античного мира и выведение предков народов Передней Азии из отдельных областей Греции имело целью подкрепление колонизационного приоритета этих областей.

Наличный материал по древнейшей истории армян показывает, что этот народ теснейшим образом связан с древним Ванским царством (Урарту). В частности, названия основных областей Армении, игравших большую роль в ее исторической жизни (Цопк, Тайк, Алзник, Андзит и др.), восходят к названиям отдельных стран, упоминаемым урартскими клинообразными надписями.

В летописи урартского царя Сардура (VIII в. до н. э.) упоминается страна Арме (Армини), с главным городом Нихиром, находившаяся около пределов Ассирии. Позднее, повидимому, на месте города Нихира (Непер) Тигран II построил свою столицу Тигранакерт и в ней принял царский венец.

Таким образом, армены, составлявшие первоначальное ядро армянского народа, входили в состав Ванского царства.

В конце VI в. до н. э. в политической жизни Передней Азии произошли крупные события. В результате войны Мидии и Вавилонии с Ассирией пало Ассирийское государство, а Урарту потеряло свое прежнее значение.

Моисей Хоренский первым армянским царем считал Паруйра сына Скайорды, оказавшего помощь Мидии в войне против Ассирии.

На основании клинописных документов, вавилонских и ассирийских, в частности хроники Набупаласара, устанавливается историческая достоверность сведений Хоренского, подвергавшихся ранее сомнению. Паруйр был князем страны Арме, которая в 612 г. до н. э. при ослаблении Ванского царства отделилась от него и получила самостоятельность. Страны западной части Армянского нагорья, отделившиеся от Урарту, объединились в два союза, что отражено в политической жизни Армении на всем протяжении второй половины I тысячелетия до н. э. В юго-западной части нагорья образовался союз, во главе которого стала страна Арме (Армини), поэтому, персы назвали его Армина, греки—Армения, но вавилоняне продолжали называть его старым термином Урашту (Урарту).

В северо-западной части Армянского нагорья образовался союз во главе с племенем хаев, которых упоминают и античные писатели. Хетты еще в XIV в. до н. э. называли северную часть Армении Хайаса. При слиянии этих двух союзов и образовании нового госу-

дарства, название племени хаев стало общим национальным термином нового народа, в то время как соседние государства продолжали называть его по юго-западному союзу—армянами.

Исторические материалы Передней Азии времени упадка и гибели государств Древнего Востока (Ассирии, Урарту, Вавилонии) показывают, что возникновение новых народов, в частности, армян, следует рассматривать как процесс качественного переоформления отдельных этнических групп Передней Азии. Армянский народ, таким образом, является глубокими корнями связанным с Передней Азией, а не случайным, пришлым элементом.